# ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

31ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 33 (1533) ՇԱԲԱԹ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 17, 2011
VOLUME 31, NO. 33 (1533) SATURDAY, SEPTEMBER 17, 2011

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ**

## ՈՂՋՈՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՍԱՆԱՄԵԱՅ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ



Աւելի քան հինգ դարու հաւատաւոր, հետեւողական ու անդուլ պայքար մղեց հայ ժողովուրդը օտարի լուծէ դուրս գալու, իր ճակատագրի տէր դառնալու եւ ազատ, անկախ եւ գերիշխան հայրենիք մ'ունենալու համար: Իր սրբազան ազգային ձգտումներու նուիրագործումը իր անկախութեան մէջ տեսնող Հայաստան՝ այս օրերուն, կը պատրաստուի աննախընթաց շքեղութեամբ տօնախմբելու իր պատմական անկախութեան 20-րդ տարեդարձը:

Անտարակոյս, պատմական կարելի է համարել Հայաստանի Անկախութեան այս տարեդարձը պարզ այն պատճառաւ, որ ամբողջ դարեր, օտարի բիրտ, արիւնաքամ տիրապետութիւններու ներքեւ, իր իսկ հողին վրայ հալածուած, անիրաւուած եւ կոտորածներու ենթարկուած, բայց միշտ յուսակորով, լաւատես եւ ազատատենչ հայ ժողովուրդը, տենդագին եւ խորը յամառութեամբ պայքարեցաւ իր երկրի անկախութեան ձեռքբերման համար: Ան մերժեց անձնա-տւութիւնը: Անդուլ եւ նպատակասլաց՝ կապուած մնաց իր սրբազան հողին, հայրենիքին եւ հաւատաց անոր լինելիութեան: Ան միշտ հաւատարիմ մնաց իր ազգային ժառանգութիւններուն, որոնք արտայայտութիւն գտան իր ազգային ինքնութեան, ծաղկուն մշակոյթին եւ հոգեւ-մտաւոր հարստութիւններուն անվթար պահպանման մէջ: Ան հասաւ իր նպատակին, հանգրուաններով երեք անկախութիւններ, որոնք պատմականօրէն իրենց արձանագրութիւնը կը գտնեն առաջին, երկրորդ եւ երրորդ հանրապետութիւն բնութագրութիւններուն տակ:

Այդ ֆիզիքական անսպառ կորովին, հոգեմտաւոր արժանիքներուն եւ լինելիութեան հանդէպ իր ունեցած հաւատքին արգասիքը չէ՞ր միթէ Հայաստանի Մայիսեան Հանրապետութիւնը, որ Պայրոնեան բնութագրութեամբ՝ փիւնիկի նմանողութեամբ միշտ յարութիւն առնող հայ ժողովուրդը, կերտեց Սարդարապատեան առաջին արիւնաքամ այլապէս պարտադրուած Հանրապետութիւնը, թող որ, հասկնալի պատճառներով -ուր գերիշխող կը դառնային քաղաքականօրէն սխալ կողմնորուշմներն ու փորձառական կեանքի չգոյութիւնը- երկու տարուած կարճատեւ տեւողութիւն ունեցաւ, առանց կարենալու իր հայրենասիրութեան չափանիշով հայրենիք մը գոյացնելու:

Նոյնպէս, հայու նոյն այդ լիարժէք ազգային ոգին չէ՞ր միթէ, որ ծնունդ տուաւ Նոյեմբերեան Հայաստանին, որ աւելի քան ութ տասնամեակներու սահմանափակ ժամանակահատուածի մը մէջ, իր սպառած, թշուառ եւ շուարուն ժողովուրդին տուաւ իր թիկունքը: Ներշնչեց: Գործելու, արդիւնաւորելու, ստեղծագործելու եւ իր հողին կապուելու աննախադէպ ուժեղ ոգի, կորով եւ ներշնչում տուաւ՝ կարենալ իր հաւաքական եւ հայրենական կեանքը կազմակերպելու, զօրացնելու եւ արդիւնաւորելու համար:

Արդարեւ, Հայաստան՝ պատահականութեան յուսահատեցուցիչ քմայքներուն թողլքուած, անտէր-անպաշտպան ու դիւրաբեկ սահմանները ամրապնդեց, զանոնք դարձնելով անխորտակելի վահաններու: Ան վերականգնեց իր պետական, ժողովրդական, ուսումնական, մշակութային, գիտական, շինարարական եւ ներհայրենական կեանքը: Վերանուաճեց իր ազգային արժանապատուութիւնը: Որպէս ընդունակ, առաջատար եւ ստեղծագործ երկիր եւ ժողովուրդ՝ արժանաւորապէս մուտք գործեց յառաջադէմ

Շար.ը էջ 6

## ՀԱԽ-Ի ԲԱՑ ՆԱՄԱԿԸ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՀԻԼԸՐԻ ՔԼԻՆԹԸՆԻՆ

*«Ուիքլիքսի» կողմէ վերջերս գաղտնազերծուած փաստաթուղթերէն ի յայտ կու գայ ու, Միացեալ Նահանգներու Պետական Քարտուղարութիւնը քաջալերած է Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ երկխօսութիւնն ու հաշտեցումը, քաջատեղեակ ըլլալով հանդերձ, որ կը մաքրագործէ իր պատմական արխիւները, փճացնելով Հայկական Ցեղասպանութեան վերաբերեալ կարեւոր փաստաթուղթերը:*

*Այս կապակցութեամբ ՍԴՀԿ Հայ Ամերիկեան Խորհուրդը բաց նամակ մը յղած է Հիլըրի Քլինթընին, պահանջելով, որպէսզի Պետական Քարտուղարութիւնը վերատեսութեան ենթարկէ Հայկական Ցեղասպանութեան հանդէպ իր վերաբերմունքը ու համոզէ Թուրքիոյ կառավարութիւնը, որպէսզի ճանչնայ պատմական անցեալը:*

*Տիկին Քլինթընին ուղղուած նամակին մէջ յատկապէս ըսուած*



Միացեալ Նահանգներու Պետքարտուղ Հիլըրի Քլինթըն

*է-. «Հայ Ամերիկեան Խորհուրդի, ինչպէս նաեւ ամերիկահայութեան անունով մեր զայրոյթը կը յայտ-*

Շար.ը էջ 5

## ՈՉՆՉԱՑՈՒԱԾ Է ԱՏՐՊԷՅՃԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ՕԴԱՆԱՒԸ

*Սեպտեմբեր 14-ին, Արցախի Պաշտպանութեան Բանակը տարածեց հաղորդագրութիւն մը, ու կը յայտնուի թէ Ղարաբաղա-ատրպէյճանական սահմանագծին վրայ արձանագրուող գինադադարի խախտման պարագաներուն զուգահեռ, նկատելի դարձած է եւ աշխոյժութեամբ կը գործէ նաեւ հակառակորդի օդուժը, որ կ'իրականացնէ ինչպէս մարտաւսումնական, այնպէս ալ հետախուզական բնոյթի թռիչքներ:*



Արցախի Պաշտպանութեան Բանակի կողմէ վար առնուած օդանաւի բեկորները

*Ըստ Պաշտպանութեան Բանակի տուեալներուն, վերջին օրերու ընթացքին հակառակորդի անօդաչու օդանաւերը բաւական մեծ յաճախականութեամբ հետախուզական թռիչքներ կը կատարեն սահմանային գօտիի ամբողջ երկարութեամբ, իսկ որոշ պարագաներուն ալ կը խախտեն Արցախի օդային սահմանը: Պաշտպանութեան Բանակի հակաօդայիններու կողմէ նման բնոյթի թռիչքներ արգիլելու նպատակով ձեռք առնուած են համապատասխան քայլեր:*

*Սեպտեմբեր 12-ին, Պաշտպանութեան Բանակի ռատիոէլեկտրոնային պայքարի ստորաբաժանումներու կողմէ ձեռնարկուած յատուկ միջոցներու արդիւնքով, Մարտունիի շրջանի Վազգէնաշէն գիւղի մերձակայքը, չարքէ հանուած է ատրպէյճանական զինուած ուժերու մէկ անօդաչու թռչող սարք: Ոչնչացուած օդանաւի մասերը կը գտնուին Պաշտպանութեան Բանակի տրամադրութեան տակ:*


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ 20-ԱՄԵԱԿԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ
ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՅ ՓԱՌԱՏՕՆ

ARMENIAN INDEPENDENCE DAY FESTIVAL

ԿԻՐԱԿԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ 18, 2011
VERDUGO PARK - ԿԼԷՆՏԷՅԼ

FREE ADMISSION
ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ

# ՔՈՉԱՐԵԱՆԻ, ԹԷ ՍԱՐԳՍԵԱՆԻ ՀԱՄԱՐ Է ՀԵՇՏ

*ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ*

*Հայաստանի եւ Ղարաբաղի անկախութեան քսանամեակները Ռոբերդ Քոչարեանի համար դարձան հերթական հարցազրոյցների առիթ: Մի քանի օր առաջ նա հարցազրոյց էր տուել Արցախի Հանրային հեռուստաընկերութեանը, իսկ հիմա էլ Ռոբերդ Քոչարեանը հարցազրոյց է տուել իր համար «աւանդական» լրատուամիջոցին՝ Մեդիամաքսին:*

*Հետաքրքրական է, թէ արդեօք Հայաստանի Հանրային հեռուստաընկերութիւնը Քոչարեանից հարցազրոյց կը վերցնի Հայաստանի անկախութեան 20-ամեակի առիթով: Հանրայինն այդ առումով յայտնուել է թերեւս ոչ այդքան դիւրին վիճակում, որովհետեւ Քոչարեանից հարցազրոյց վերցնելու դէպքում Հանրայինը առաւել եւս պէտք է հարցազրոյց վերցնի անկախ Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանից: Այլապէս տարօրինակ պատկեր կը ստացուի, յատկապէս Ազգային պատկերասրահում Սերժ Սարգսեանի ունեցած ելոյթի հանդուրժողական ոգուց յետոյ:*

*Ռոբերդ Քոչարեանը 20-ամեակների առիթով տուած իր հարցազրոյցներում սակայն անդրադարձ չի անում ներքաղաքական իրավիճակին ու խնդիրներին, բայց անգամ այդ պարագայում նկատելի է նրա մրցակցութիւնը Սերժ Սարգսեանի հետ: Մասնաւորապէս, Մեդիամաքսը Քոչարեանին հարցնում է, թէ ինչպէս է յաջողում փոքր պետութիւնների ղեկավարներին «ոչ» ասել գերտէրութիւններին:*

*«Պարզապէս պէտք չէ բարդութաւորուել: Երկրի չափը չի նշանակում, որ նրա նախագահն անպայման աւելի խեղճ է եւ արդիւնաւէտ միւս նախագահներից: Այո, նրանք, անկասկած, աւելի ազդեցիկ են երկրի քաղաքական կշռի շնորհիւ: Սակայն դա ամենեւին չի նշանակում, որ նրանք քո պետերն են, եթէ, իհարկէ, դու ինքդ նրանց այդ կերպ չես ընկալում: Գլխաւորը՝ կարողանալ կառուցել ճիշդ, ազնիւ գործընկերային փոխյարաբերութիւններ, յստակ ներկայացնել քո երկրի շահերը եւ ունենալ համոզիչ փաստարկային հիմք, եթէ դու ինչ-որ բանի հետ համաձայն չես: Ինձ մօտ, օրինակ, շատ ջերմ յիշողութիւններ են մնացել Վլադիմիր Պուտինի, Ժակ Շիրակի եւ Բիլ Քլինթոնի հետ շփումից: Նրանցից ոչ ոք երբեք չի փորձել ընդգծել իր գերազանցութիւնը», ասում է Քոչարեանը:*

*Առաջին հայեացքից սովորական այդ պատասխանն իրականում հետաքրքրական է դառնում, երբ յիշում ենք մարքսիստ Դաւիթ Յակոբեանի մի «բացայայտումը» Սերժ Սարգսեանի հնչեցրած մտքերից մէկի կապակցութեամբ: Մարքսիստը մի առիթով յայտարարեց, թէ մարզահամերգային համալիրում կազմակերպուող կլոր սեղաններից մէկի ժամանակ, երբ ինքը Սերժ Սարգսեանին ասել է, որ պէտք է ռուսներին յստակ ներկայացնել մեր դիրքորոշումը, Սերժ Սարգսեանը պատասխանել է. «Արա, կարծում ես հեշտ ա՛ Ռուսաստանի նախագահի հետ խօսելը»:*

*Ռոբերդ Քոչարեանը, ըստ էութեան, ասում է այն, ինչ ասել է մարքսիստը Սերժ Սարգսեանին: Եւ հետեւաբար Սարգսեանի պատասխանը, որ տրուել է մարքսիստին, թէ «արա, կարծում ես հեշտ ա Ռուսաստանի նախագահի հետ խօսելը», փաստացի կարելի է համարել պատասխան նաեւ Ռոբերդ Քոչարեանին: Կամ, աւելի ճիշդ, Ռոբերդ Քոչարեանի Մեդիամաքսին տուած պատասխանը կարելի է համարել պատասխան Սերժ Սարգսեանի մարքսիստին տուած պատասխանին:*

*Այդ իրավիճակը ունի ուշագրաւ մի նրբերանգ: Բանն այն է, որ ներկայում երկրի կեանքում տեղի ունեցող փոփոխութիւնները, թէկուզ իմիտացիոն բնոյթի երկխօսութիւնը կամ իմիտացիոն ժողովրդավարական քայլերը, որ անում է Սերժ Սարգսեանը, իշխող համակարգում ընկալւում են որպէս Արեւմուտքի պարտադրանքի հետեւանք: Համակարգում թերեւս կայ համոզմունք, որ եթէ Արեւմուտքը չպարտադրեր կամ չճնշէր, Սերժ Սարգսեանը ընդդիմութեանը ոչ մի գիջում չէր անի, ոչ մէկին բանտից բաց չէր թողնի եւ իրենց էլ իգուր տեղն անյարմար վիճակի մէջ չէր դնի:*

*Ռոբերդ Քոչարեանն ըստ երեւոյթին փորձում է խաղալ համակարգի այդ ընկալումների վրայ եւ հաւաստիացնել, թէ Սերժ Սարգսեանը գերտէրութիւնների հետ չի կարողանում խօսել եւ համակարգը տանում է «փորձութեան», մինչդեռ ինքը գերտէրութիւնների հետ խօսել գիտէ եւ համակարգը զերծ կը պահի այդպիսի փորձութիւններից, ընդդիմութեան հետ աւելորդ սեթեւեթանքների անհրաժեշտութիւնից, ինչպէս արել է իր նախագահութեան շրջանում:*

*Բայց, համակարգը թերեւս լաւ է յիշում, որ իր ամենամեծ փորձութիւնը եղել է հենց Քոչարեանի նախագահութեան շրջանում, Մարտի 1-ին: Ըստ երեւոյթին, իշխող համակարգի համար նախընտրելի կը լինի ապրել հանրութեան հետ «սեթեւեթանքների» փոքր տագնապներով ու վախերով, քան եւս մէկ անգամ վերապրել Մարտի 1-ին ունեցած սարսափը եւ մնալ դրա ծանրութեան տակ:*

*«ԼՐԱԳԻՐ»*

# ՏԱՐՕՐԻՆԱԿ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ

*ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ*

*Ճիշտն ասած, ինձ հաւասարապէս մտահոգում է ե՛ւ այն, երբ Հայաստանը շատ ուժեղ փնովում են, ե՛ւ այն, երբ չափից դուրս գովում են: Օրինակ՝ երբ «Ֆորբսը» գրել էր, թէ մեր երկրի տնտեսութիւնը ամենավատթարներից մէկն է, դա ինձ թուաց իրականութեան միտումնաւոր խեղաթիւրում: Նոյնպիսի, բայց «հակառակ ուղղութեամբ» խեղաթիւրում է ԵԽԽՎ մոնիտորինգի յանձնաժողովի բանաձեւը, ըստ որի՝ Մարտի 1-ի եւ «Ա1+»-ի հետ կապուած բոլոր խնդիրները լուծուած են:*

*Ես չգիտեմ, թէ ինչպիսի տրամաբանութեամբ են առաջնորդւում Հայաստանի հարցով ԵԽԽՎ համազեկուցողները եւ մոնիտորինգի յանձնաժողովը, բայց ինձ համար միակ ընդունելի տրամաբանութիւնը հետեւեալն է: 2008-ի Մարտի 1-ին տեղի է ունեցել յանցագործութիւն՝ սպանուել են մարդիկ: Ինչպէս այս, այդպէս էլ ցանկացած այլ յանցագործութեան «էջը փակուած» կարելի է համարել այն դէպքում, երբ այն բացայայտուած է, եւ մեղաւորների նկատմամբ դատավճիռները մտել են օրինական ուժի մէջ: Մնացածը պարապ խօսակցութիւններ են: Այդ հարցով ստեղծուած ԱԺ համապատասխան յանձնաժողովը կարող է գրել հոյակապ կամ էլ չափազանց անյաջող զեկոյց, քաղաքական ուժերը կարող են երկխօսել կամ ընդհանրապէս իրար չբարեւել, քաղբանտարկեալներ կարող են լինել կամ չլինել, գործիչները, լրագրողները, փորձագէտները կարող են համարել, որ Մարտի 1-ի քաղաքական կամ բարոյական պատասխանատուն Պօղոսն է կամ Պետրոսը: Բայց այդ էջը կարող է փակուել ոչ թէ Ստրասբուրգում կամ որեւէ այլ քաղաքում գումարուած նիւթում, այլ միայն դատարանի դահլիճում:*

*Եւրոպայի խորհուրդը, որքան հասկանում եմ, ստեղծուել է նախեւառաջ անդամ երկրներում եւրոպական արժէքները եւ մարդու իրաւունքները պաշտպանելու համար: Կա՞յ արդեօք աւելի եւրոպական արժէք, քան օրէնքի իշխանութիւնն է, եւ աւելի հիմնարար իրաւունք, քան կեանքի իրաւունքն է: Յարգարժան համազեկուցողները երբ յաջորդ անգամ գան Հայաստան, թող հետաքրքրուեն զոհուածների հարազատներից՝ իրենց ի՞նչն է հետաքրքրում Մարտի 1-ի գործում՝ ով ի՞նչ զեկոյց է գրել, թէ այն, որ իրենց զաւակներին սպանածները կ՚անգնեն դատարանի առաջ:*

*Նոյնը՝ «Ա1+»-ը: Դարձեալ հասկանալի չէ, թէ որ փաստաթղթի կամ փաստերի որ համադրութեան հիման վրայ են եւրոպացիները եկել այն եզրահանգման, թէ ՀՌԱՀ-ը անց է կացրել թափանցիկ մրցոյթ: Կամ գուցէ «թափանցիկ» բառն ենք մենք տարբեր ձեւով հասկանում: Իսկապէս, որոշ իմաստով շատ թափանցիկ էր, որ իշխանութիւնը յաճախականութիւնները բաժանել է իր վերահսկողութեան տակ գտնուող հեռուստաընկերութիւններին՝ կազմակերպելով «մրցոյթ» առանց որեւէ այլընտրանքի, իսկ այլընտրանքային մրցոյթ է անցկացրել միայն այն երկու դէպքերում, երբ ցանկացել էր «Ա1+»-ին եւ ԱԼՄ-ին յաճախականութիւն չտալ: Կասկածում եմ, որ համանախագահները եւ ԵԽ նախարարների խորհուրդը դա չեն նկատել: Մնում է ենթադրել, որ այդ կառոյցներն առաջնորդւում են ոչ թէ փաստացի իրավիճակով, այլ այն քաղաքական «առաջադրանքներով», որոնք նրանք պարտադրուած են կատարել:*

*«ԱՌԱՒՕՏ»*

**ՄԱՍԻՍ** ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՈՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ԳԱԲՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ
ՍԱՀԱԿ ԹՈՒԹԵՆԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $80.00 (First Class)
Canada $120.00 (Air Mail)
Overseas $225.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

# ՄԱՐԴՆ ԱՓԻ ՄԷՋ

*Հնարաւո՞ր է ապրել այնպէս, որ անխոցելի լինես՝ եթէ քեզ գաղտնալսեն, բանալուդ անցքից 24 ժամ հետեւեն, քո բոլոր արարքներն ու խօսքերն արձանագրեն: Կարո՞ղ ես ապրել այնպէս, որ այդ ամէնում ոչ մի մեղադրելի բան չլինի, որից կարելի է ամաչել, եւ որը քեզ կը ստիպի արդարանալ: Չէ՞ որ մեր օրերում այդ ամէնն ընդամէնը տեխնիկայի հարց է՝ նորագոյն տեսանկարահանող սարքերի, ինտերնետի, յատուկ տեխնոլոգիաների շնորհիւ:*

*Մեր աչքի առաջ մի կնոջ անձնական կեանքը դարձաւ լայն հանրութեան քննարկման առարկայ, իսկ այնպիսի արեւելեան երկրում, ինչպիսին Հայաստանն է, դա կարող է ողբերգական աւարտ ունենալ նրա համար: Մեր աչքի առաջ բազում պաշտօնեաներ յայտնուեցին «Վիքիլիքսի» մերկացումների օբիեկտիվում, եւ պարզուեց, որ ամենաերկաթեայ գաղտնիութիւնն անգամ երաշխիք չէ՝ ԱՄՆ դեսպանի հետ հանդիպումդ կարող է դառնալ լայն հանրութեան սեփականութիւնը: Մեր աչքի առաջ հզօր ու պաշտպանուած մարդկանց են կալանաւորում ու դատում, եւ պարզւում է, որ գործերը յարուցուել են «օպերատիւ տուեալների» հիման վրայ, որը ոչ այլ ինչ է, քան «կագեբէի» տրամադրած նիւթերը: Աջուձախ լսում ենք՝ այսինչի հեռախօսազանգերի վերծանումն են հանել, այնինչի հարբած խօսակցութիւններն են ձայնագրել ու դրել համապատասխան սեղաններին: Եւ արդիւնքում այլեւս չենք զարմանում, երբ բարձրաստիճան պաշտօնեան մի քանի օրում զրկւում է եւ պաշտօնից, եւ ունեցուածքից, եւ ազատութիւնից: Սակայն երբ այս ամէնը տեղի էր ունենում խորհրդային կագեբէական անցեալ ունեցող Հայաստանում, դեռ կարելի էր հասկանալ, բայց երբ նոյն մեթոդներն են սկսում աշխատել ամբողջ աշխարհում, երբ պարզւում է՝ ԱՄՆ դիւանագիտական փաստաթղթերը ոչնչով չեն տարբերւում «կագեբէի» նիւթերից, հասկանում ես, որ մարդը յայտնուել է ափի մէջ: Հասարակութեան ափի:*

*ԽՄԲԱԳՐԱԿԱՆ*
*«ՀՐԱՊԱՐԱԿ»*

## ՀԱՅԱՍՏԱՆ

# ԼԵՒՈՆ ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ-. «ԱՌԱՔԵԼԵԱՆԻ ԱԶԱՏ ԱՐՁԱԿՄԱՆ ԴԷՊՔՈՒՄ ՊԱՏՐԱՍՏ ԵՆՔ ՎԵՐԱԴԱՌՆԱԼ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՍԵՂԱՆԻՆ»



ՀԱԿ-ի հանրահաւաքի մասնակիցները Ազատութեան հրապարակի վրայ

«Մօտակայ օրերին Տիգրան Առաքելեանի ազատ արձակման դէպքում մենք պատրաստ ենք վերադառնալ բանակցութիւնների սեղանին: Հակառակ պարագայում, երկխօսութիւնն առկախուած թողնելով, մենք հարկադրուած կը լինենք իշխանութիւնների հետ խօսել այլ լեզուով»,- Սեպտեմբերի 9-ին ընդդիմադիր Հայ Ազգային Կոնգրէսի հանրահաւաքում յայտարարեց Հայաստանի առաջին նախագահ, ՀԱԿ առաջնորդ Լեւոն Տէր-Պետրոսեանը:

Ընդդիմութեան առաջնորդը յստակեցրեց, որ «այլ լեզու» ասելով ամենեւին յեղափոխութիւն կամ ապստամբութիւն նկատի չունի, այլ հանրահաւաքների յաճախակիացման եւ ժողովրդական զանգուածների առաւելագոյն համախմբման կամ գերմոբիլիզացիայի միջոցով «արտահերթ նախագահական եւ խորհրդարանական ընտրութիւնների անցկացման պարտադրում»:

Ըստ Լեւոն Տէր-Պետրոսեանի, եթէ իշխանութիւնները չուտափոյթ կերպով չլուծեն Տիգրան Առաքելեանի խափանման միջոցը փոխելու հարցը, ընդդիմութիւնը ստիպուած կը լինի մտածել, որ ոստիկանութեան եւ Կոնգրէսի երիտասարդութեան միջեւ տեղի ունեցած միջադէպը նրանց կողմից յատուկ կազմակերպուած է եղել, կամ առնուազն իշխանութիւններն օգտագործել են այդ պատրուակը՝ երկխօսութիւնը վիժեցնելու համար՝ դժգոհ լինելով վերջինի ընթացքից:

«Մեզ համար ի սկզբանէ իսկ ակնյայտ էր, որ երկխօսութեան բնականոն ընթացքի պարագայում անգամ, այն չէր հանգեցնելու մեր ուզած արդիւնքին, որովհետեւ այդ արդիւնքը բոլոր դէպքերում կախուած էր լինելու ժողովրդական զանգուածների ճնշման աստիճանից: Հետեւաբար, երկխօսութեան առկախումը, կամ նոյնիսկ նրա վերջնական դադարեցումը, մեր ծրագրերը չի փոխում, եւ մեր նպատակը մնում է նոյնը, այն է՝ անդադար զանգուածային միջոցառումների ճնշման տակ իշխանափոխութեան չուտափոյթ իրականացումը եւ աւազակապետութեան ամբողջական կազմաքանդումը», - յայտարարեց ՀԱԿ առաջնորդը:

Ելոյթի աւարտին ՀՀ առաջին նախագահը, յիշեցնելով «Սկսել ա» անունը կրող երիտասարդական շարժման մասին, ելոյթը եզրափակեց հենց այդպէս՝ «Սկսել ա»:

Լեւոն Տէր-Պետրոսեանից բացի հանրահաւաքում ելոյթ ունեցան մի շարք ընդդիմադիր գործիչներ, այդ թւում ՀՀՇ վարչութեան նախագահ Արամ Մանուկեանը, «Հանրապետութիւն» կուսակցութեան առաջնորդ Արամ Սարգսեանը, ՀԺԿ առաջնորդ Ստեփան Դեմիրճեանը:

Ընդդիմադիր ՀԱԿ յաջորդ հանրահաւաքը յայտարարուեց Սեպտեմբերի 23-ին: Այս առիթով Լեւոն Տէր-Պետրոսեանը յիշատակեց, որ Հայաստանի անկախութիւնը հռչակուել է 1991 թուականի Սեպտեմբերի 23-ին՝ Սեպտեմբերի 21-ի հանրաքուէից յետոյ:

ՀԱԿ հանրահաւաքը եզրափակուեց երթով Երեւանի կենտրոնական փողոցներով:

# «ՀԱԿ-Ը ՀԱՆՐԱՀԱՒԱՔՆԵՐԻ ԱԿՏԻՒԱՑՄԱՄԲ ԻՐԱՎԻՃԱԿ ՉԻ ՓՈԽԻ».- ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿԵԱՆ

Գալուստ Սահակեանը Հայ Ազգային Կոնգրէսի (ՀԱԿ)՝ վերջին հանրահաւաքի ժամանակ հնչած ելոյթները եւ քննադատութիւնները իշխանութեան հասցէին համարում է նորմալ ու բնական, հաշուի առնելով «առաջիկայ ընտրութիւններին ընտրազանգուած պահելու՝ Հայ Ազգային Կոնգրէսի նպատակը»:



ՀՀԿ փոխնախագահ Գալուստ Սահակեան

«Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում մեկնաբանելով հանրահաւաքի ժամանակ ՀԱԿ-ի առաջնորդ Լեւոն Տէր-Պետրոսեանի ելոյթը՝ իշխող կուսակցութեան փոխնախագահը ասաց, թէ Կոնգրէսը ցայտնոտի մէջ է:

«Ես կարծում եմ՝ ոչ թէ հնարք էր, այլ պարզապէս չունենալով որոշակի արգումենտներ՝ ցայտնոտի մէջ են եւ փորձում են պահել իրենց ընտրազանգուածը, որը ես բնական եմ համարում, որովհետեւ փորձելու են նաեւ խորհրդարանում տեղեր զբաղեցնել», - յայտարարեց Սահակեանը:

«Իսկ եթէ ՀԱԿ-ը մտածում է՝ իմիտացիան էն տեղում պիտի հասցնի, որ երկիշխանութիւն է երկրում, եւ իշխանութիւնները հակուած են անպայման, գիշերը քունը չի տանում իշխանութիւնների, որ պիտի երկխօսեն՝ դա այդպէս չէ: Մենք երկխօսում ենք ամբողջ ճակատով՝ բոլոր կուսակցութիւնների հետ: Իսկ Ազգային ժողովը իրական երկխօսութեան ճամբարն է», - յաւելեց Հանրապետականի փոխնախագահը:

Սահակեանը, թէեւ կողմ է երկխօսութիւնը շարունակելուն, բայց դրա դադարեցումից Հայաստանի համար լուրջ վնասներ չի տեսնում: Նրա պնդմամբ՝ երկխօսութիւնը առկախելու համար Տիգրան Առաքելեանի դէպքը հենց Հայ ազգային կոնգրէսի համար էր պատրուակ, ընդդիմութիւն - իշխանութիւն երկխօսութեան ընդհատման համար մեղաւոր է հենց ընդդիմութիւնը. - «Խօսքը վերաբերում է արտահերթ ընտրութիւններին, դա իրենց ստեղծած փուչիկն է, եւ կանխազգալով, որ այն արգումենտները, որ իրենք են բերում, եւ լսելով նաեւ իշխանութեան տեսակէտը, որը մինչեւ այսօր ըստ պայմանաւորուածութիւնների չենք հրապարակել, իրենց փաստաթուղթը դառնալու է ծիծաղելի: Դրա համար առիթը օգտագործեցին ինչ-որ պայմաններ դնելու առումով»:

# ԿԱՐԻՆԷ ԽՈԴԻԿԵԱՆ. «ՄԱՐԴԻԿ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ՀԵՌԱՆՈՒՄ ԵՆ ՈՉ ԹԷ ԱՐՏԱՍՈՒԵԼՈՎ, ԻՆՉՊԷՍ ՆԱԽԿԻՆՈՒՄ ԷՐ, ԱՅԼ ԱՐՀԱՄԱՐՀԱՆՔՈՎ ԵՒ ԹՇՆԱՄԱՆՔՈՎ»

Դրամատուրգ Կարինէ Խոդիկեանն իր հիւրերին օդանաւակայանից Մոսկուա ճանապարհելիս նկատել է եւ խիստ զգացուել, որ մարդիկ Հայաստանից հեռանում են ոչ թէ արտասուելով, ինչպէս նախկինում էր, այլ արհամարհանքով եւ թշնամանքով: Այս մասին նա պատմեց Սեպտեմբերի 12-ին լրագրողների հետ հանդիպման ժամանակ:

«Գնացողների աչքերի մէջ այնպիսի մի ատելութիւն կայ: Բայց ո՞ր մէկն է նստում ու մեկնողների լացը լացում՝ սկսած արտագաղթի դէմն առնող պետական պատկան մարմիններից մինչեւ կուսակցութիւններ ու հասարակութիւն»,- հռետորական հարց հնչեցրեց նա: Խոդիկեանի խօսքով, «եթէ տղամարդը գնում է աշխատանքի եւ չի կարողանում իր ընտանիքը պահել, պարզ չէ՞, որ պիտի գայ ու մուրը թափի ընտանիքի վրայ»:

«Մի անգամ կինը փող կ'ուզի, երկրորդ անգամ, բայց հենց դրանից էլ ագրեսիան առաջանում է: Եթէ մարդն արհեստ եւ ներուժ ունի եւ չի կարողանում դրանով փող վաստակել, իսկ երէկուայ դուրսպրծուկները միլիարդներ են շաղ տալիս, դա եւս ագրեսիա է ծնում»,- համոզմունք յայտնեց դրամատուրգը:

Ամփոփելով՝ նա նկատեց, որ չունենք այն պետութիւնը, որը կը պաշտպանէր քաղաքացուն: «Դրա համար էլ մանկատներում երեխաներին ինչ ուզում, անում են (նկատի ունի մանկապղծութեան դէպքերը՝ խմբ.), դրա համար էլ մեր թոշակառուները թոշակ ստանալու համար ժամերով հերթ են կանգնում»,- ասաց Խոդիկեանը:

# ՎԻԿՏՈՐ ԴԱԼԱՔԵԱՆ.- ՀՀ 3 ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԲԱՑԱՅԱՅՏ ԿԱՄ ՔՕՂԱՐԿՈՒԱԾ ՊԱՅՔԱՐԸ ԿԱՐՈՂ Է ԴԱՌՆԱԼ 2012-Ի ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՑՔԸ

Հայաստանի երեք նախագահների բացայայտ կամ քօղարկուած պայքարը կարող է դառնալ 2012 թ. խորհրդարանական ընտրութիւնների առանցքը: Այդ մասին սեպտեմբերի 13-ին յայտարարել է անկուսակցական Վիկտոր Դալաքեանը Ազգային ժողովում ունեցած ելոյթի ժամանակ:

Նրա կարծիքով, այն քաղաքական ուժերը, որոնք գերիշխող դիրքեր կը զբաղեցնեն նոր խորհրդարանում, գերադասելի հնարաւորութիւններ կը ստանան 2013 թ. նախագահական ընտրութիւններում: «Բացի այդ, ակնկալւում է, որ հերթական խորհրդարանական ընտրութիւնները տեղի կ'ունենան հասարակական ակտիւ եւ քաղաքական ուժերի հետեւողականութեան մթնոլորտում: Դա հնարաւորութիւն կտայ, որ ընտրութիւնները անցկացուեն քաղաքակիրթ ճանապարհով, ոչ թէ սովորութիւն դարձած գլադիատորական մարտերի օրէնքներով»,- յայտարարել է Դալաքեանը:

Յիշեցնենք, որ հերթական խորհրդարանական ընտրութիւնները Հայաստանում տեղի կ'ունենան 2012 թ. մայիսին:

# ՄԱՀԱՑԵԼ Է ԳԱՐԵԳԻՆ ԱԶԱՐԵԱՆԸ

Սեպտեմբեր 9-ի երեկոյեան անսպասելիօրէն մահացել է կենտրոնական ընտրական յանձնաժողովի նախագահ Գարեգին Ազարեանը:

Գարեգին Ազարեանը մահացել է սրտի կաթուածից:

Գարեգին Ազարեանը 50 տարեկան էր: Նա 2003 թուականի Յուլիսից մինչ օրս զբաղեցնում էր ԿԸՅ նախագահի պաշտօնը:

Այս տարուայ Յուլիսին նա վերընտրուել էր ԿԸՅ նախագահի պաշտօնում: Ընտրական օրէնսգրքում կատարուած վերջին փոփոխութիւններով նրա թեկնածութիւնը այդ պաշտօնի համար առաջադրել էր Վճռաբեկ դատարանի նախագահը:

## ՖՐԱՆՍԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՀԱՅԱՍՏԱՆ Կ'ԱՅՑԵԼԷ ՀՈԿՏԵՄԲԵՐԻՆ

Ֆրանսայի նախագահ Նիքոլա Սարքոզին յառաջիկային տարածաշրջանային այց պիտի կատարէ Հարաւային Կովկաս: Այս մասին յայտնած է Ֆրանսայի մէջ Վրաստանի դեսպան Մամուկա Կուդաւա: Ինչպէս կը յայտնեն վրացական լրատուամիջոցները, ան չէ յստակացուցած այցի ժամկէտը: Կը սպասուի, որ Սարքոզին Հայաստան, Վրաստան եւ Ատրպէյճան այցելէ Հոկտեմբերին:

# ԼՈՒՐԵՐ

## WIKILEAKS-Ը ՀՐԱՊԱՐԱԿԵԼ Է ԱՄԵՐԻԿԵԱՆ ԴԻՒԱՆԱԳԷՏՆԵՐԻ ԵՒ «ԱԿՕՍ»-Ի ԽՄԲԱԳԻՐ ՀՐԱՆԴ ԴԻՆՔԻ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ

WikiLeaks կայքը հրապարակել է փաստաթուղթ, որտեղ ներկայացւում են հատուածներ ամերիկեան դիւանագէտների եւ Ստամբուլի «Ակօս» թերթի խմբագիր Հրանդ Դինքի խօսակցութիւնից:



Հրանդ Դինք

Մասնաւորապէս 2007 թ. Յունուարի 30-ին թուագրուող փաստաթղթում Ստամբուլում ԱՄՆ-ի գլխաւոր հիւպատոս Դեբորա Ջոնսը կանգ է առնում Դինքի եւ ԱՄՆ միջազգային կրօնական ազատութեան յանձնաժողովի ներկայացուցիչների միջեւ տեղի ունեցած հանդիպման վրայ:

Խօսելով ազգային փոքրամասնութիւնների կարգավիճակի, ինչպէս նաեւ կրօնական հարցերի մասին՝ Դինքը յայտարարել է, որ Թուրքիայում կրօնի ազատութիւնը մակերեսային բնոյթի է՝ եկեղեցիները, դպրոցները արգելուած չեն, սակայն ազատութեան այդ ձեւը մոլորութեան մէջ են գցում: «Նա նման է թռչունի, որը տեսականօրէն կարող է թռչել՝ չնայած, որ թեւը կոտրուած է»,- ընդգծել է Դինքը:

Մեկնաբանելով Եւրամիութեանն անդամակցելու Թուրքիայի մտադրութիւնը՝ Դինքը նշել է, որ գործընթացը ձգձգւում է այն պատճառով, որ «հիմնուած է վախի, բայց ոչ ԵՄ-ին անդամագրուելու պատրաստակամութեան վրայ»:

Հրանդ Դինքն «Արդարութիւն եւ զարգացում» կուսակցութիւնն անուանել է ղեկավարման աշխարհիկ համակարգի իրական օրինակ:

«Թուրքիայում իսկական աշխարհիկութիւնը կարող է ձեռք բերուել տարբեր կրօնների ազատութեան շնորհիւ: Մենք շարժւում ենք ժողովրդավարացման աշխարհիկութեան միջոցով: Այդ առումով Թուրքիան կարող է լաւ օրինակ լինել իր հարեւանների համար»,-յայտարարել է նա:

Դինքը նշել է, որ քրիստոնեաների հանդէպ պատմականօրէն բացասական պահերը հիմնուած են ոչ թէ կրօնների տարբերութեան, այլ ազգայնականութեան վրայ:

## «ԻՐԱՆԻ ՄԷՋ ՀԱՅԵՐԸ ՔՆՆԱԴԱՏՈՂ ԱՏՐՊԷՅՃԱՆՑԻՆԵՐԸ ԿԸ ՊԱՏԺՈՒԻՆ»

Եթէ իրանաբնակ ոեւէ ատրպէյճանցի փորձէ քննադատել Հայաստանը եւ այն, ինչ այդ պետութիւնը ըրած է ատրպէյճանցիներուն նկատմամբ, գինք պարզապէս կը կախեն: Այս մասին Թրքական «Ենի Շաֆաք» թերթին տուած հարցազրոյցին ըսած է ատրպէյճանական արմատներով իրանցի բանաստեղծը, որ պարբերականին ներկայացած է կեղծանունով՝ Ազերի Հայիպ:

33-ամեայ բանաստեղծը, որ Իրանի մէջ կը պայքարի ատրպէյճանցիներու իրաւունքներու համար, իշխանութիւններու ճնշումներու պատճառով ստիպուած փախած է Իրանէն եւ բնակութիւն հաստատած Թուրքիա:

Հայիպը Թրքական պարբերականին պատմած է Թեհրանի կողմէ ատրպէյճանական ծագում ունեցող քաղաքացիներու դէմ իրականացուող ճնշումներու մասին:

«Իրանի եւ Հայաստանի միջեւ առկայ յարաբերութիւններու պատճառով չենք կրնար քննադատել Հայաստանի մեր պետութեան դէմ կատարածը: Եթէ Իրանի մէջ այդ թեմայով գրուած իմ բանաստեղծութիւններս գտնեն, զիս մահապատիժի կ'ենթարկեն»,- ըսած է ատրպէյճանցի բանաստեղծը՝ նշելով, որ իր ընկերներէն շատերը այդ պատճառով ներկայ պահուն կը գտնուին իրանական բանտերու մէջ:

«Մեր թերթերն ու գիրքերը կը տպագրուին պարսկերէն: Մեր հեռուստաալիքները պարսկերէն կը հեռարձակուին: Մեզի թոյլ չեն տար գրել եւ կարդալ մայրենիով: Հակառակ անոր, որ մենք կը կազմենք բնակչութեան 55%-ը, իրաւունք չունինք մեր լեզուով գրելու եւ կարդալու»,- ըսած է Հայիպը՝ աւելցնելով, որ Իրանի մէջ կը շարունակեն ճնշել եւ ստորացնել ատրպէյճանցիները:

«Մեզ կը շարունակեն ճնշել: Թերթերու մէջ մեզ կը նուաստացնեն: Մեզ կը ներկայացնեն իբրեւ անբարոյականներ, չեն յարգեր մեր գաղափարները: Ֆիլմերու մէջ մեզի միայն աղբահաւաքի դեր կու տան: Մենք մեր բողոքի ձայնը բարձրացուցինք այս բոլորի դէմ: Սակայն մեզմէ մի քանի հոգի բանտ նետեցին»,- ըսած է բանաստեղծ Հայիպ:

Միւս կողմէ, Իրանի մէջ բախումներ տեղի ունեցած են տեղաբնակ ատրպէյճանցիներու եւ իրաւապահներու միջեւ:

Ինչպէս կը տեղեկացնեն ատրպէյճանական լրատուամիջոցները, բախումները տեղի ունեցած են Թաւրիզի Թեհրանի «Իսթիքլալ» եւ Թաւրիզի «Դրախթուր Սազի» թիմերու հանդիպումէն ետք:

Ֆութպոլային հանդիպման ժամանակ մեծ թիւով ատրպէյճանցիներ մարզադաշտի մէջ պարբերաբար բացականչած են՝ «կեցցէ Թաւրիզ մայրաքաղաքով միասնական Ատրպէյճանը«, «կեցցէ Ատրպէյճանը, իսկ ով չի ցանկանար, թող կուրանայ»:

Իրաւապահներու հետ բախումները տեղի ունեցած են ֆութպոլային հանդիպումէն անմիջապէս ետք, եւ աւարտած է Թաւրիզի «Դրախթուր Սազի» թիմի յաղթանակով:

Ըստ ատրպէյճանական լրատուամիջոցներու՝ բախման ընթացքին ձերբակալուած է յայտնի ակտիւիստ, նախկին քաղբանտարկեալ Ապպաս Լիսանին:

## ԱՅՍ ՏԱՐՈՒԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ 15 ՀԱԶԱՐ ՀԱՅԱՍՏԱՆՑԻ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹԻՒՆ ԿԱՄ ԿԱՑՈՒԹԵԱՆ ԻՐԱՒՈՒՆՔ ՍՏԱՑԱԾ Է

Ռուսաստանի վիճակագրութեան ծառայութեան՝ ընթացիկ տարին դէպի Ռուսաստան արտագաղթի մասին տուեալները կը վկայեն, որ հետսովետական տարածքի երկրներէն Ռուսաստանի Դաշնութիւն ամենաշատը կը ներգաղթեն Ուզպեքստանի բնակիչները:

Այդ տուեալներուն համաձայն՝ այս տարուան առաջին կիսամեակին Ռուսաստանի քաղաքացիութիւն կամ կացութեան իրաւունք ստացած է 159 հազար մարդ: Ներգաղթեալներու հոյքի մեծ մասը նախկին ԽՍՀՄ միջինասիական երկրներէն է:

Ամենամեծաթիւ ներգաղթողներն են Ուզպեկստանի եւ Ղրղզստանի գաղթականները՝ համապատասխանաբար 28,6 հազար եւ 19,9 հազար մարդ: Մօտ 30 հազար մարդ Ռուսաստան տեղափոխուած է Հարաւային Կովկասէն եւ յատկապէս Հայաստանէն. Այստեղէն Ռուսաստան տեղափոխուած է 15 հազար մարդ, իսկ մերձպալթեան պետութիւններէն Ռուսաստան գաղթած 1,6 հազար մարդ:

Հեռաւոր արտասահմանէն ամենաշատ ներգաղթեալներ կան Չինաստանէն՝ 3 հազար մարդ, եւ Գերմանիայէն՝ 1,9 հազար մարդ:

## ԳԵՐՄԱՆԱՑԻ ՊԱՏՄԱԲԱՆԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԴԱՍԵԼ Է ԵՒՐՈՊԱՅԻ ՄՈՌԱՑՈՒԱԾ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇԱՐՔԻՆ

Յայտնի գերմանացի պատմաբան Կլաուս Լեգեւիի՝ «Պայքար եւրոպական յիշողութեան համար» գրքում Հայոց ցեղասպանութիւնը դասւում է Եւրոպայի մոռացուած ողբերգութիւնների շարքին:

Ինչպէս տեղեկացնում է Deutsche Welle-ն, Կլաուս Լեգեւիի գիրքի գլխաւոր նպատակն է, որը նա գրել է Աննէ Լինգի հետ համագործակցութեամբ, յիշեցնել արեւմտեան եւրոպացիներին մոռացուած պատմական իրադարձութիւնների մասին:

Deutsche Welle-ի հետ զրոյցում Կլաուս Լեգեւին նշել է, որ գրքի հիմնական թէզիսը կայանում է այն բանում, որ Եւրոպան չի կարող միասնական լինել՝ չունենալով լիարժէք պատմական յիշողութիւն:

Գրքում մոռացուած կամ քիչ յայտնի ողբերգութիւնների շարքում նշւում են 1915թ. Օսմանեան կայսրութիւնում տեղի ունեցած Հայոց ցեղասպանութիւնը, Բալթեան երկրներում սովետական բռնազաւթման հետեւանքները, հակամարտութիւնը Բոսնիայում եւ ուկրաինական Հոլոդոմորը:

## ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԲԱՐՁՐ ՈՐԱԿԱՒՈՐՄԱՆ ԱՇԽԱՏՈՒԺ ԵՆ ՆԵՐԳՐԱՒՈՒՄ

Վերջին տարիներին արաբական երկրները Հայաստանից ներգրաւում են աշխատուժ, ինչի առնչութեամբ Հայաստանի եւ Արաբական Միացեալ Էմիրութիւնների, ինչպէս նաեւ Հայաստանի եւ Քաթարի միջեւ նախապատրաստւում են աշխատուժի օգտագործման մասին համաձայնութիւններ:

«Այսօր ե՛ւ Քաթարում, ե՛ւ Արաբական Միացեալ Էմիրութիւններում մեր քաղաքացիները աշխատում են: Մեր գործընկերներն են առաջարկել, որպէսզի Հայաստանի Հանրապետութիւնը անմասն չմնայ այս գործընթացին եւ կարողանայ ինչ-որ ձեւով նաեւ իր քաղաքացիների կողքին լինի, երբ որ խնդիրներ կամ այլ հարցեր կ'առաջանան», - կառավարութեան նիստում, տեղեկացնելով, մասնաւորապէս, Քաթարի հետ համաձայնութեան նախաստորագրման մասին, յայտարարեց փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմէն Գէորգեանը: - «Յատկապէս վերջին տարիներին մեր երկրից պահանջարկ է առաջացել այդ երկրներում որակեալ կադրերի: Ամէն մի ընկերութիւն իր ճանապարհը գտնում է, այնուամենայնիւ, այդ կադրերին հաւաքագրելու եւ այնտեղ տանելու, եւ ընդամէնը խնդիր է առաջացել, որպէսզի այս գործընթացները աւելի կանոնակարգուած լինեն: Մշտական բնակութեան կամ քաղաքացիութիւն ստանալու խնդիրներ չեն լինելու՝ հաշուի առնելով այդ երկրների առանձնայատկութիւնները: Մենք ոչ թէ խթանում ենք արտագաղթը, այլ կանոնակարգում ենք տեղի ունեցող միգրացիոն գործառոյթները եւ գործունէութիւնը»:

Միգրացիոն պետական ծառայութեան պետ Գագիկ Եգանեանի խօսքով, երբ արաբական երկրների հետ համաձայնագրերը ստորագրուեն, ազատ աշխատատեղերի վերաբերեալ տեղեկութիւններ կ'ուղարկուեն հայկական կողմին:

Այդ ամէնի մասին կը տեղեկացուեն Հայաստանի քաղաքացիները, յստակեցնում է Եգանեանը, - «Նրանցից ովքեր որ ցանկութիւն կ'ունենան եւ կը համապատասխանեն այդ պահանջներին, կը գան, իրենց տուեալները կը թողնեն մեզ մօտ, որից յետոյ կը տեղեկացուի այդ մասին քաթարական գործընկերներին: Նրանք կ'ուղարկեն համապատասխան մասնագէտների, որոնք Երեւանում հարցազրոյց կը կազմակերպեն թեկնածուների հետ եւ նրանց, ովքեր կը բաւարարեն պահանջները, կ'առաջարկուի աշխատանք»:

Գագիկ Եգանեանի խօսքով, այս մասնագէտներին առաջարկուելու է շատ գրաւիչ պայմաններով՝ նոյնիսկ եւրոպական պետութիւններում ընդունուածից բարձր աշխատավարձերով, եւ պաշտպանուած աշխատանքային պայմանագրերով աշխատանք:

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

Հայ news am

# ԼՈՒՐԵՐ

## ՄԵՏՎԵՏԵՒ. ՍՈՒՐԻՈՅ ՎՐԱՅ ՃՆՇՈՒՄ ԲԱՆԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՅԱՒԵԼԵԱԼ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐՈՒ ԿԱՐԻՔ ՉԿԱՅ




*Տէյվիտ Քամերոն եւ Տմիթրի Մետվետեւ*

Ռուսիոյ Նախագահ Տմիթրի Մետվետեւ յայտարարեց, որ ինք «Սուրիոյ վրայ յաւելեալ ճնշում բանեցնելու կարիք չի տեսներ»՝ նշելով, որ «Ռուսիա պիտի չզօրակցի Սուրիոյ Նախագահ Պաշշար Ասատի վրայ ՄԱԿ-ի կողմէ պատժամիջոցներ հաստատելու արեւմտեան ջանքերուն»:

Մետվետեւ Բրիտանիոյ վարչապետ Տէյվիտ Քամերոնի հետ Մոսկուայի մէջ տրուած միացեալ մամլոյ ասուլիսի մը ընթացքին յայտնեց, որ «ներկայիս իրականութեան մէջ Սուրիոյ դէմ Եւրոպական Միութեան եւ Միացեալ Նահանգներու կողմէ բազմաթիւ պատժամիջոցներ հաստատուած են եւ ներկայիս այդ ուղղութեամբ յաւելեալ ճնշում գործադրելու կարիք չկայ»:

Միւս կողմէ, սակայն, ան կոչ ուղղեց Ապահովութեան խորհուրդին մէջ որդեգրելու «ուժեղ որոշում» մը, որ հաւասարակշռուած եւ տագնապի երկու կողմերուն ուղղուած ըլլայ: Մետվետեւ նշեց, որ Ռուսիա այդպիսի որոշումի մը բանաձեւման պիտի զօրակցի:

Ռուսիոյ Դաշնակցային խորհուրդի Նախագահ Էլիաս Օմախանով Սուրիոյ Նախագահի քաղաքական եւ մամլոյ հարցերով խորհրդական Պուսէյնա Շաապանի հետ ունեցած իր հանդիպումէն ետք յայտնեց, որ «Սուրիոյ ապագան կը տեսնենք այդ երկրին ժողովուրդին իր ճակատագիրը ճշդել կարենալուն մէջ, եւ Ռուսիոյ կեցուածքը կարելի է ամփոփել արտաքին միջամտութեան դիպաշարը արգիլելու մէջ»:

Ան յայտնեց, որ ռուս ծերակուտականներէ կազմուած պատուիրակութիւն մը կ՚ուզէ Սուրիոյ մէջ քաղաքական ամենէն լայն հատուածներուն հետ հանդիպումներ ունենալ: «Սուրիայէն եկած տեղեկութիւնները հակասական են, ուստի իսկական կացութեան ծանօթանալու համար այցելութիւն պիտի կատարենք», ընդգծեց Օմախանով: Պատասխանելով Սուրիոյ ապագան Ասատի ներկայութեամբ կամ առանց անոր պատկերացնելուն մասին հարցումի մը՝ ան նշեց, որ ,այդ հարցը սուրիացի ժողովուրդը կը ճշդէ:

Մինչ այդ, ռուսական բանակի սպայակոյտի պետ զօր.Նիքոլայ Մաքարով յայտարարեց, որ Ռուսիա Թարթուսի մէջ գտնուող իր զօրակայանը պիտի պահէ:

Միւս կողմէ, Արաբական Ծոցի համագործակցութեան խորհուրդը Սուրիոյ կոչ ուղղեց արիւնահեղութիւնը անմիջապէս դադրեցնելու եւ «լուրջ ու անմիջական բարեփոխումներ» կիրարկելու: Ծոցի համագործակցութեան խորհուրդի նախարարաց ժողովը Սէուտական Արաբիոյ մէջ գումարուած իր ժողովին ընթացքին մտահոգութիւն յայտնեց արիւնահեղութեան շարունակման, բռնարարքներու աճին եւ բանակի օգտագործման նկատմամբ՝ վստահեցնելով, որ խորհուրդը Սուրիոյ կայունութեան եւ միասնականութեան նկատմամբ նախանձախնդիր է:

## ԷՖԵՆՏԻԻ ԶԳԵՍՏՈՎ ՕՍՄԱՆՑԻ ՈՒԱԼԻՆ ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՓՐԻԿԷՅԻ ՄԷՋ

Գահիրէի մէջ, լրագրողներու հետ ունեցած կարճ զրոյցի մը ընթացքին, վարչապետ Ռեճէպ Թայիփ Էրտողան յայտարարեց, թէ «Ազատութեան Նաւատորմիղեին դէմ կատարուած գործողութիւնը պատերազմի յայտարարութիւն մըն էր, սակայն ինք համբերատարութեամբ մօտեցած էր միջադէպին»: Թուրքիոյ վարչապետը ընդունուեցաւ իր նախասիրած սենարիոյով՝ ուսամբարձ: Ան այն տպաւորութիւնը ստեղծեց, թէ սիւննի աշխարհի պետը եւ պաղեստինեան դատին պաշտպանը կը դիմաւորէին եգիպտացիները: Բարեբախտաբար արաբ լրագրողները խուսափեցան փճացնելու Թուրքիոյ վարչապետին տրամադրութիւնը եւ չուզեցին հասկնալ Կազա կատարելիք այցելութիւնը ջնջելու պատճառները: Գահիրէի մէջ, Թուրքիոյ վարչապետը ինքզինք պահեց իբրեւ «Բոլոր ժամանակներու արաբական աշխարհի հերոսը»:

Էրտողան անդադար սպառնալիքներ յղեց Իսրայէլի հասցէին: Ան յայտարարեց, թէ թրքական երեք եզերապահներ պիտի սկսին շրջիլ արեւելեան Միջերկրականի մէջ. «Ծովային նաւարկութեան ազատութիւնները պաշտպանելու եւ անհրաժեշտութեան պարագային՝ իսրայէլեան նաւերուն դէմ հակամարտութեան մտնելու նպատակով: Միջերկրականի մէջ թիաւարելը մեր արդար իրաւունքն է». ըսաւ Էրտողան: Այսուհանդերձ, Էրտողան բացառեց Թուրքիոյ դէմ ռազմական հակամարտութեան մէջ մտնելու կարելիութիւն մը, բայց աւելցուց, թէ Անգարա պատրաստ է բոլոր ընտրանքներուն: Վարչապետը անիմաստ եւ անարժէք գնահատականը տուաւ «Ազատութեան Նաւատորմիղ»ին առնչութեամբ ՄԱԿ-ի հրապարակած տեղեկագիրին:



*Էրտողան կը խօսի Արաբական Լիկայի ամպիոնէն*

Էրտողան հաստատեց, թէ Թուրքիոյ մօտ Իսրայէլի զինուորական կցորդը մերժած է լքել Անգարան: «Մենք դիւանագիտական ճամբաներով զինք կը մղենք, որ հեռանայ մեր երկրէն». ըսաւ Էրտողան:

Պաշտօնական եգիպտական աղբիւրներ յայտնեցին, թէ Էրտողան Գահիրէ կատարած այցելութիւնը կ՚օգտագործէ տակաւ խորացնելու Եգիպտոսի եւ Իսրայէլի միջեւ գոյութիւն ունեցող լարուածութիւնը: Էրտողան հանդիպում մը ունեցաւ Եգիպտոսի զինուորական խորհուրդի պետ, զօրավար Հիւսէյն Թանթաուիի հետ, ապա խօսք մը արտասանեց Արաբական Լիկայի ամպիոնէն:

## ՔԻՒՐՏ ՂԵԿԱՎԱՐԸ ԿԸ ՊԱՀԱՆՋԷ ՈՐ ԻՍՐԱՅԷԼ ՆԵՐՈՂՈՒԹԻՒՆ ԽՆԴՐԷ ՕՃԱԼԱՆԻ ՀԱՄԱՐ



*Քիւրտիստանի Աշխատաւորական Կուսակցութեան ղեկավար Մուրատ Քարայիլան*

Քիւրտիստանի Աշխատաւորական Կուսակցութեան ղեկավար Մուրատ Քարայիլան Իսրայէլէն պահանջեց ներողութիւն խնդրել՝ Ապտուլլա Օճալանի ձերբակալութեան մէջ ունեցած դերակատարութեան համար: Օճալան ձերբակալուեցաւ 1999-ին:

Քիւրտ ղեկավարին յայտարարութիւնը անուղղակի պատասխան մըն էր՝ Քիւրտիստանի Աշխատաւորական Կուսակցութեան ռազմական օժանդակութիւն տրամադրելու մասին օրեր առաջ Իսրայէլի արտաքին գործոց նախարար Ավիկտոր Լիպերմանի յայտարարութեան: Քարայիլան ըսաւ. «ՔԱԿ-ը սկզբունք ունեցող կազմակերպութիւն մըն է, եւ ոչ՝ որեւէ պետութեան դէմ օգտագործուող կառոյց»:

## ՀԱԽ-Ի ԲԱՑ ՆԱՄԱԿԸ ՀԻԼԸՐԻ ՔԼԻՆԹԸՆԻՆ

*Շարունակուած էջ 1-էն*

նենք, որ Պետական Քարտուղարութիւնը ունենալով հանդերձ տեղեկութիւններ, որ կ՚ոչնչացուին Հայկական Ցեղասպանութեան վերաբերող կարեւոր փաստաթուղթեր, քաջալերած է Հայաստանի Հանրապետութիւնը եւ Թուրքիան, որպէսզի ձեռնամուխ ըլլալ հայ-թրքական Արձանագրութիւններուն, որոնց կէտերէն մէկը կը նախատեսէ, «Երկխօսութիւն պատմական չափանիշերով, նպատակ ունենալով վերականգնել փոխվստահութիւնը երու ազգերուն միջեւ, ներառեալ պատմական փաստաթուղթերու անկողմնակալ եւ գիտական քննութեան կատարումը, որպէսզի ճշդուին գոյութիւն ունեցող խնդիրները եւ կատարուին յանձնարարականներ:

«Որպէս ամերիկացիներ, կ՚ակնկալենք, որ Միացեալ Նահանգներու Պետական Քարտուղարութիւնը, որպէս մեր ներկայացուցիչը միջազգային համայնքէն ներս, անաչառ եւ պարկեշտ միջնորդ դառնայ ու քաջալերէ համերաշխութիւնն ու բարի կամքը՝ Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ: Սակայն, «Ուիքիլիքսի» կողմէ բացայայտուած դիւանագիտական հեռագիրները ցոյց կու տան, որ պետական քարտուղարութիւնը ամբողջութեամբ տեղեակ էր, որ թրքական արխիւները, որոնք կը պարունակէին կարեւոր փաստաթուղթեր՝ Հայկական Ցեղասպանութեան վերաբերեալ, թուք պաշտօնեաներու կողմէ ոչնչացուած էին, հակառակ ատոր, շարունակեց պաշտպանել Արձանագրութիւնները, զանոնք նկատելով կարեւոր քայլ երկկողմ յարաբերութիւններուն գծով:

«Տիկին քարտուղարուհի, կոչ կ՚ընենք, որ ճշդէք Ձեր Բաժանմունքի կեցուածքը Հայկական Ցեղասպանութեան նկատմամբ: Ցեղասպանութիւնը ընդունելի ոճրագործութիւն չէ եւ 21-րդ դարուն Ցեղասպանութեան ուրացումը կը մնայ անհասկնալի: Նաեւ, կը պահանջենք որ, Ձեր Բաժանմունքը համոզէ Թուրքիոյ կառավարութիւնը, որպէսզի դադրի ուրանալ Հայկական Ցեղասպանութիւնը եւ իր իսկ պատմական անցեալը»:

# ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՔՍԱՆՄԵԱԿԻՆ ԱՌԹԻՒ

*ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ*

*Եթէ ամեակները, անհատական թէ պետական առումով, պատեհ առիթներ են յետադարձ ակնարկ մը նետելու անցած ուղիին վրայ եւ գնահատումներ կատարելու, ուրեմն Հայաստանի Հանրապետութեան անկախութեան քսանամեակի նախօրեակին, յարմար կը գտնենք մեր այս խորհրդածութիւնները բաժնելու մեր ընթերցողներուն հետ:*

*Անցնող քսան տարիներու ընթացքին, գլխաւոր ի՞նչ յաջողութիւններու հասանք եւ ի՞նչ թերացումներ ունեցանք:*

*Մեր պատմութեան մէջ ԱՌԱՋԻՆ անգամ ըլլալով, ժողովրդային քուէարկութեամբ ծնունդ տուինք անկախ պետականութեան մը: Այդ պետութիւնը միջազգային ճանաչում ստանալով, դարձաւ Միացեալ Ազգերու Կազմակերպութեան անդամ:*

*387 թուին, Արշակունեաց անկախ պետականութեան Պարսկական եւ Բիւզանդական կայսրութեանց միջեւ բաժանումէն ի վեր, ԱՌԱՋԻՆ անգամ ըլլալով հայրենի հողատարածք ազատագրեցինք եւ հայկական գերիշխանութեան ենթակայ մեր հողային սահմանները ընդարձակեցինք Արցախեան հերոսամարտով:*

*Յոյժ կարեւոր ձեռքբերումներու այս կարճ շարքը դժբախտաբար կանգ առաւ: Հողահաւաքը դժբախտաբար չի զուգորդուեցաւ հայահաւաքով: Ընդհակառակը, տեղի ունեցաւ ցրւում, սփռում աշխարհի չորս կողմերը: 1920էն 1990 երկարող եօթանասուն տարիներու ընթացքին, 700,000 բնակչութիւնէն մինչեւ 4,000,000 աճած մեր հայրենաբնակ ժողովուրդը, անցնող քսան տարիներու ընթացքին մէկ երրորդով կոտորակուեցաւ: Ի՞նչ են պատճառները: Ինչո՞ւ, օրինակ, Իսրայէլի նման պետութեան մը համար կարելի դարձաւ անկախութեան առաջին քսան տարիներուն, իր հրեայ բնակչութեան թիւը ԵՌԱՊԱՏԿԵԼ, 800,000ը հասցնելով 2,400,000ի, մինչ Հայաստանի պարագային ԿՈՏՈՐԱԿՈՒԵՑԱՒ մէկ երրորդով: Ինչու? Իսրայէլի համար կարելի կը դառնայ Պաղեստինեան գրաւեալ հողերու վրայ իսկ վերաբնակեցնել իր քաղաքացիները, մինչ մենք ոչ միայն չենք կրնար վերաբնակեցնել ազատագրուած Արցախը, այլ նոյնիսկ կ'արտագաղթենք հոնկէ: Որո՞նք են պատասխանատուները այս ազգային ոճրագործութեան մակարդակի հասնող արարքներուն: Խնդրեմ, մի՛ ըսէք թէ մեզի կը պակսին միջոցները: Արդեօ՞ք երկրի հարստութիւնը կողոպտած ու միլիառներ գերազանցող աւարներու տիրացած մեր պետական այրերն ու օլիկարխները որեւէ պատասխանատուութեան բաժին չունին ատոնց մէջ: Եւ մենք փոխանակ հաշի՞ւ պահանջելու անոնցմէ, խնճոյքներո՞վ կը դիմաւորենք զանոնք: Արժէքներու այս ի՞նչ անկում:*

*Ի՞նչու համար տարիներով ժողովուրդի երազած անկախ Հայաստանի բարձրագոյն պաշտօնին տիրացած անձը, պիտի չկարենայ համաժողովրդային տօնախմբութեան մթնոլորտի մէջ ընդունելու իր նախագահական երդումը, այլ զայն պիտի կատարէ փշալարերու ետին, ժողովուրդէն անջատուած վիճակի մէջ: Ի՞նչու համար նախագահի բարձրագոյն պաշտօնին տիրացած անձը, երբ կ'այցելէ սփիւռքահայ հայրենակարօտ գաղթօճախներ, պիտի չարժանանայ համաժողովրդային բարի գալուստի ցնծութեան, այլ պիտի դիմաւորուի բողոքի ցոյցերով եւ կամ ընտրովի, փոքրաքանակ ու մասամբ ակամայ „հիւրընկալներով»: Այս պատկերները փաստացի տուեալներ չե՞ն, որ անոնք կտրուած են ժողովուրդէն եւ չեն ներկայացներ զանիկա: Այդ ինչպէ՞ս եղաւ, որ մեր ճակատագիրը յանձնեցինք այդպիսիներուն:*

*Այս վիճակի՞ն պիտի հասնէր այն անկախ Հայաստանը, որուն տարիներո՞վ երազած էինք: Խնդրեմ, մի՝ ըսէք Սփիւռքի Նախարարուհիին նման, թէ Հայաստանի Հանրապետութիւնը պատանի է, ուստի եւ սխալներ գործելու ենթակայ: Եթէ մեր պետական ղեկավարները միայն պատանեկան հասունութեան տէր անձինք են, ապա Նախարարուհին իրաւունք կրնայ ունենալ: Բայց կը կասկածինք որ այդպէս է, թէեւ քիչ ալ չէ Ազգային Ժողովէն ներս մականունաւորներու եւ գրագիտութեան կարօտներու ներկայութիւնը: Երբ մենք ազգովին կը հպարտանանք հազարամեակներու պատմութիւն եւ մշակոյթ ունենալնուս համար, ուստի եւ արդար չէ՝, որ մեր պետական այրերէն ակնկալենք համապատասխան գիտակցութիւն եւ վարք: Այս ի՞նչ օրերու ինկանք:*

*Կա՞յ արդեօք հայ մը, որ հանգիստ կը զգայ անցնող քսան տարիներու ընթացքին Հայաստանի ազգաբնակչութեան թիւի, արդարադատութեան համակարգի, մարդկային իրաւունքներու, սոցիալական ապահովութեան, տնտեսական մրցակցութեան եւ այլ մարզերու «զարգացումներուն» ի տես: Ոեւէ խղճամիտ ու ազգասէր հայի համար, անկարելի պիտի ըլլայ հանգիստ խղճով պատասխանել այս հարցումին, առանց մտահոգութեան եւ ընդվզումի: Ո՞ւր կ'երթանք:*

*Այս ընթացքով ոչ միայն ի դերեւ կու գան ապագայ հողահաւաքի մեր յոյսերը, այլ նաեւ վտանգուած կ'ըլլան մեր վերեւ նշած մեծարժէք յաջողութիւնները՝ մեր անկախ պետականութիւնն ու Արցախեան հերոսամարտով ազատագրուած հողերը: Ժամանակը եկած չէ՝ վերականգնելու 88ի ոգին, կասեցնելու այս գահավէժ ընթացքը եւ Չարենցեան պատգամի հետեւութեամբ, ապահովելու մեր փրկութիւնը: Ո՞ր օրուան կը սպասենք:*

# ՈՂՋՈՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՍԱՆԱՄԵԱՅ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ

*Շարունակուած էջ 1-էն*

երկիրներու համաստեղութեան շարքերէն ներս, թող որ, լուսանցքի վրայ մնային անոր դարաւոր ազգային ձգտումներու եւ հիմնա-հարցերու հետապնդման եւ նուիրագործման գործընթացը, անշուշտ հասկնալի պատճառներով:

Գերզօր Խորհրդային Միութեան անակնկալ անկումը ճամբայ բացաւ Հայաստանի առջեւ կատարելագործելու իր ժողովուրդի դարաւոր երազը, որ էր կոթողէ՛լ իր անմնացորդ , ամբողջական եւ լիիրաւ անկախութիւնը, որ կը պայմանաւորուէր իր «Ազատ», «Անկախ» եւ «գերիշխան» սրբազան բովանդակութեամբ:

Ահա թէ ինչու՞, պատմական նշանակութիւն ունի մեր նորօրեայ Հայաստանի Հանրապետութեան անկախութիւնը , որուն քսաներորդ տարեդարձը արդար հրճուանքով կը զեղու մէն մի հայորդիի բաբախուն սիրտը: Հպարտ է ան, որ աւելի քան հինգ դարու պատմութեամբ բազում տառապանքներէ, կեղեքումներէ, տուայտանքներէ, ենթակայական բարդոյթներու ենթակայ դառնալէ ետք, իր ժողովուրդը կը վերատիրանար իր կորսուեալ անկախութեան: Խանդավառ է ան, անգամ անոր արձանագրած մասնակի ձեռքբերումներով, ըլլայ՝ ազգային, ըլլայ՝ միջազգային թատերաբեմերու վրայ: Անգամ այդ արձանագրուած մասնակի յաջողութիւնները, անցնող քսան տարիներուն, հեզասահ չանցան:

Անկախութեան ձեռք բերման սկզբնական տարիներուն, Ազերի վոհմակներու կողմէ կատարուած բորկրոմներ, թուրք ու ազերի շրջափակումներ, երկրաշարժ ու տնտեսական ճգնաժամեր, որոշապէս խոչընդոտեցին Հայաստանի Հանրապետութեան կառուցողական գործընթացը, նաեւ, անոնց վրայ գումարուող՝ տիրող իշխանութիւններու կողմէ գործ դրուած սահմանադրական եւ ընտրական, արդարադատական զեղումները, իշխանութիւններու կողմէ կիրարկուած բռնարարքները, անպատիժ գոյարող ինչքի եւ կեանքի հաշուեյարները, սպանութիւնները եւ կաշառակերութիւնը – շարքը շատ է երկար բոլորը թուելու համար, եւ պատեհ ալ չէ Անկախութեան Քսանամեակի առիթով անոնց վրայ ծանրանալ – խոչընդոտեցին երկրի յառաջընթացը, պատճառ դառնալով տակաւ ընդհանրացում արձանագրող արտագաղթին՝ դէպի ներքին եւ արտաքին Սփիւռք, եւ այս՝ հայրենի իշխանաւորներու սառն ու անտարբեր նայուածքներուն տակ... Տխուր՝ բայց, ա՛յս է պարզուած պատկերը մեր հայրենի անկախութեան քսաներորդ տարեդարձին, որուն ամբողջական պատասխանատուութիւնը կը բառնայ Հայաստանի իշխանութիւններուն վրայ: Անոնք կառավարական օրակարգի նիւթ անգամ դարձուցած չեն արտագաղթը ցարդ: Ե՞րբ է, որ մեր ժողովուրդին երբեք անկախութիւն շնորհած հայու ոգին զգաստութեան պիտի հրաւիրէ հայրենի մէն մի վարիչի՝ որ անխտրական ոգիով, անբասիր հայրենասիրութեամբ ծառայէ իր ազգին ու հայրենիքին:

Մենք կը հաւատանք, որ դարեր երկար մաքառումներու շնորհիւ մեր երկրէն խլուած անկախութեան վաւերական վերականգնումը բաւարար հաւաստիք է արձանագրուած այդ ապօրինութիւններու անյապաղ սրբագրութեան: Նաեւ, կը հաւատանք, որ այդ թերիներու անյապաղ սրբագրութիւնը պիտի արժեւորէ ոչ միայն ձեռք ձգուած անկախութիւնը, նաեւ՝ զանիկա նուիրագործող հայու ոգին:.

Ողջոյն եւ հազար փառք եւ պատիւ ստեղծագործ հայ ժողովուրդին՝
Ողջո՛յն եւ հազար փառք ու պատիւ հայու անմար ոգիին՝
Ողջո՛յն եւ հազար փառք ու պատիւ Հայաստանի Հանրապետութեան՝
Հայաստանի Անկախութեան Քսաներորդ Տարեդարձին առթիւ:




### ԱՆՑՈՂԱԿԻ ՀԱՇՈՒԵԿՇԻՌ

# 11 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2001...ԵՒ ՅԵՏՈՅ



*ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ*

*Հիմա որ աւարտած են պաշտօնական միջոցառումները, խօսուած՝ ճառերը, եւ հեղած՝ հարազատներու անամոքելի վիշտի արցունքները, հաւանաբար ամենապատեհ առիթն է փորձելու սա տարրական բայց յաճախ անտեսուած ու նոյնիսկ խրտչելի, ապերախտ առաջադրանքը – յստակատես մօտեցմամբ, կարելի առարկայականութեամբ քննարկել ողբերգութիւնը եւ զգացական զեղումներէ վեր՝ հասկնալ անոր խոր պատճառները, տարբեր շարժառիթները, եղածին տարողութիւնը, արժած գինը, լուծած խնդիրներն ու յարուցած նո՛ր տագնապները: Յաճախ կ՛անտեսուի ու կը մոռացուի այս քննարկումը կամ ինքնաքննադատութիւնը: Տարրական տրամաբանութիւնը, սակայն, մեզի կը յուշէ թէ ասիկա անհրաժեշտ է, որպէսզի չկրկնուին եղած փոքր կամ ծանրակշիռ սխալները:*

*Նիւ Եորքի մէջ Միջազգային Առեւտրական Կեդրոնի երկնաքեր զոյգ աշտարակներու վրայ ճիհատիստ ինքնասպանական յարձակումը եւ անոր փլուզումը միայն մեզի հաղորդուած 2,752 անմեղ զոհերով չի վերջանար: Զափաւոր ու պահպանողական հաշիւներով իսկ, Իրաքի, Աֆղանիստանի եւ Փաքիստանի դէմ ԱՄՆ-ի շղթայազերծած հակադարձ պատերազմներու մինչեւ հիմա հնձած զոհերն են մօտաւորապէս 6,000 ամերիկեան զինուորներ (առանց հաշուելու գործակցող միւս երկիրները), աւելի քան 150,000 անմեղ քաղաքացիներ եւ 8 միլիոն գաղթականներ այդ երկիրներէն: Դարձեալ ըստ ամերիկեան աղբիւրներու, այս երեք պատերազմները ԱՄՆ-ին արժած են համախառն մօտ 4 թրիլիոն (4,000,000,000,000) տոլար (մեծովպզտիկով ամէն մէկ ամերիկացիի՝ մօտ 1,300 տոլար): Անշուշտ չ՛ըսուիր թէ ի՞նչ եղած են պատերազմի ենթակայ այս երկիրներու եւ աշխարհի միւս երկիրներու կրած նիւթական ծանր վնասները: Չի յիշուիր նաեւ թէ ո՛ւր գացած են թրիլիոններու խոշորագոյն պատառները: Հապա՞ ինչպէս կարելի է հաշուարկել այն լախտի հարուածը որ սարսեց ամբողջ աշխարհի ապահովութիւնը, ժողովուրդներու միջեւ բարեկամական յարաբերութիւնները, բարակ թելերէ կախ բարոյական կոչուած արժէքները, նորահաս սերունդներու յոյսերն ու երազները:*

*Ինչո՞ւ այս դժուար յաղթահարելի հարուածը՝ աշխարհի ժողովուրդներու արդէն իսկ դժնդակ իրավիճակին ու մարդավայել գոյատեւման դէմ:*

*Երկրորդ համաշխարհային պատերազմին յաջորդող տասնամեակներուն, երբ նախկին կիսանկախ ու գաղութային երկիրներու ժողովուրդները ոտքի ելան իրենց ազգային ազատագրութեան եւ անկախութեան պահանջով, անոնցմէ յատկապէս մահմետական երկիրներու կղերականութիւնը փորձեց իր հակակշռին տակ պահել այդ շարժումները: Գաղութային տիրապետութեան տակ արտօնուած գրեթէ միակ կազմակերպութիւնը եղող կղերականութիւնը իր այս նպատակին մէջ կարեւոր չափով յաջողեցաւ մանաւանդ այս երկիրներէն ամէնէն չքաւորներու պարագային: Այս ընդհանուր ազատագրական հոսանքի որպէս խուրձի մէկ տարբերակը, հիթլերական նացիզմի կողմէ ողջակիզումէն հազիւ ճողոպրած հրէական զանգուածները նոյն ժամանակներուն ձեռնարկեցին՝ անգլիական գաղթատիրութեան դէմ իրենց համար ապահով օճախ մը հիմնելու պայքարին: Դժբախտաբար հոս եւս կշիռ ունեցող ուժերէն մէկն էր քաղաքական ախորժակներով տարուած կղերականութիւնը – հանգամանք՝ որ չհեշտացուց հասկացողութիւնը մահմետական արաբ ճողովուրդներու հետ: Դիրքերը տակաւ սկսան աւելի եւս կարծրանալ երբ արաբական աշխարհը դեռ որպէս գաղութ դիտող Արեւմուտքը միահամուռ թիկունք կանգնեցաւ Իսրայէլի պետութեան հաստատման – առանց, սակայն, միաժամանակ փորձելու գործնական անկողմնակալ վերաբերմունքով մեղմել արաբական հասկնալի մտահոգութիւնները:*

*Մանաւանդ այն տարիներէն ի վեր ԱՄՆ-ը, որպէս արեւմտեան առաջատար պետութիւն, մեծ պետութեան մը անյարիր միակողմանիութեամբ եւ առանց պայմանի Իսրայէլի կողքին կանգնեցաւ, ու չկարողացաւ նոյն ատեն իր անկողմնակալ կեցուածքով սիրաշահիլ արաբներն ու մահմետականները, շահիլ անոնց վստահութիւնը: Արաբական աշխարհն ու յատկապէս մահմետական ժողովուրդները ԱՄՆ-ի մէջ տեսան իրենց տարրական կարիքներու բաւարարման հակառակորդը, մանաւանդ պաղեստինցիներու դեռ մինչեւ այսօր երկարաձգուող թշուառութիւններուն ի տես:*

*Յովսէփեան Վարժարանը իր աշակերտներուն եւ ծնողներուն դիմաց բացաւ իր դռները Երեքշաբթի օր Սեպտեմբեր 6, 2011ին: Հաճելի իրարանցում մը կը տիրէր դպրոցի Գալուստեան-Տունայեանց սրահէն ներս, ուր փոքր աշակերտներուն ծնողները իրենց զաւակներուն ձեռքերէն բռնած կ՚ուղղուէին դէպի ուսուցիչ-ուսուցչուհիները, ծանօթանալու անոնց հետ եւ իրենց զաւակները յանձնելու անոնց հոգատարութեան: Ամրան ընթացքին իրարմէ հեռու մնացած դասընկեր-դասընկերուհիներ իրար կ՚ողջագուրէին եւ կը սկսէին տեղեկութիւններ փոխանակելու իրենց ամրան արձակուրդին մասին: Վերամուտի դպրոցի ամենահաճելի պահերէն մէկն է, ուր ամրան երկու ամսուան հանգիստ դադարէն ետք, աշակերտները պատրաստ են վերադառնալու դպրոց եւ սկսելու ուսումնական նոր տարեշրջան մը, զայն լաւապէս աւարտելու եւ նորանոր գիտելիքներ ամբարելու պատրաստակամութեամբ: Դպրոցիս տնօրէն՝ Պարոն Շահէ Մանկրեանը, իր բացման խօսքը փոխանցելով, բարի գալուստ մաղթեց բոլոր աշակերտներուն եւ ծնողներուն, նոր թէ հին, եւ խնդրեց ծնողներէն եւ աշակերտներէն, որ նոր աշակերտ-աշակերտուհիներուն եւ անոնց ծնողներուն հետ բարեկամանան, որպէսզի անոնք ընտելանան մեր դպրոցին եւ դառնան անդամը մեր Յովսէփեան Վարժարանի մեծ ընտանիքին: Պարոն տնօրէնը նաեւ ներկայացուց դպրոցիս հոգաբարձութեան նոր ատենապետուհին Տիկին Շաքէ Յարութիւնեանը, նշելով որ Տիկին Յարութիւնեանը արդէն տարիէ մը ի վեր ստանձնած էր դպրոցիս Ուսումնական Յանձնախումբին քարտուղարութեան պաշտօնը եւ ուսումնական մարզի մէջ իր ունեցած վաստակաշատ փորձառութեան պատճառով արդէն բարեկարգումներ գործադրած է վարժարանէս ներս եւ վստահեցուց, որ հոգաբարձութիւնը ոչ մէկ ճիգ կը խնայէ վարժարանիս յարատեւ բարգաւաճման եւ բարելաւման համար: Ապա աշակերտներն ու ծնողները ուղղուեցան Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին, ուր Հայր Սարգիս Փեթոյեան խրախուսեց աշակերտները ըլլալու միշտ պատրաստ ու արթուն, նորանոր գիտելիքներ ընկալելու եւ յառաջդիմելու իրենց դասընթացքներուն մէջ: Խմբային աղօթքէն եւ Տէր Սարգիսի «Պահպանիչ» աղօթքէն ետք իւրաքանչիւր դասարան իրենց ուսուցչուհիին ուղեկցութեամբ ուղղուեցան իրենց դասարանները: 2011-2012 ուսումնական տարեշրջանին ընթացքին մեր աշակերտներուն բարի վերամուտ եւ նորանոր յաջողութիւններ կը մաղթենք:*

***Թղթակցութիւնը Վարժարանէն***


ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ**

**Yes, I wish to subscribe to Massis Weekly**

**Enclosed a check for (one year)**

*** $50,00 for USA**

*** $60,00 (second class), $ 75,00 (Air Mail) for Canada.**

*** $85,00 (second class), $ 125,00 (Air Mail) Overseas.**

**Name: ----------------------------------------**

**Address: ----------------------------------------**

**City: --------- State:--------- Zip Code:------**

**Country: -------------**

**Tel :----------------------- Fax : ------------------------**

# ԻՐԱՒԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ



*Մինեաբոլիս*-Journal of Law & Public Policy *5րդ Հատորի առաջին թիւին մէջ լոյս տեսաւ Զորեան Հիմնարկի Ցեղասպանագիտական Ուսումնասիրութիւններու Կեդրոնի վարիչ տնօրէն՝ փրոֆ. Վահագն Տատրեանի նոր մէկ ուսումնասիրութիւնը:* "The Armenian Genocide: A Review of its Historical, Political, and Legal Aspects" *մակդիրով լոյս տեսած այս գործով հայկական ցեղասպանութեան քրէական բնոյթը նոր պարունակի մը մէջ քննութենէ կ'անցնի:*

*Մենագրութիւնը ունի ինը բաժիններ եւ տասընչորս ստորաբաժանումներ, եւ հիմնուած է արխիւային բազմալեզու սկզբնաղբիւրներու վրայ, որոնց մէջ ուշագրաւ են Օսմաներէն, Թրքերէն, եւ Գերմաներէն լեզուներով յագեցուած պաշտօնական-պետական փաստաթուղթեր:*

*Զորեան Հիմնարկի նախագահ Գուրգէն Սարգիսեան կը մատնանշէ որ իր բազմալեզու հմտութիւններուն եւ յարակից աղբիւրագիտութեան շնորհիւ, եւ յատկապէս իր եզակի վերլուծողական կարողութեամբ, Տատրեան անգամ մը եւս Հայկական Ցեղասպանութեան վերլուծումի մարզին ընծայեց նոր նպաստ մը:*

*Ներածական բաժնին մէջ ներկայացուած են նախացեղասպանական շրջանի յատուկ շարք մը կոտորածներու մանրամասնութիւնները: Խնդրոյ առարկայ է հոս նախացեղասպանական ջարդերու համառօտ նկարագրականը, այսպէս՝ 1894-96, 1903-04 եւ 1909 ի երկ-հանգրուան Ատանայի ջարդերը: Ատոնց բոլորին հասարակ յայտարարը, եւ հայ ժողովուրդին համար ամենաջլատիչ հանգամանքը այն է որ, բոլորն ալ մնացին անպատիժ. Այսինքն՝ քրէական որեւէ դատավարութիւն եւ պատժարկում տեղի չունեցաւ: Ինչպէս Տատրեան շարունակ կը շեշտէ, անպատժելիութեան այս քստմնելի իրողութեան մէջ խտացած է յետագայ Մեծ Եղեռնի յանդուգն ծրագրի մտայղացումը եւ իրագործումը: Արդարեւ, հայկական Ցեղասպանութիւնը սերտօրէն եւ դաժանօրէն կապուած է անպատժելիութեան այս պատմական իրադրութեան հետ:*

*Ինչպէս առանձին գլուխով մը փրոֆ. Տատրեան կը բացատրէ սակայն, յաւելեալ պայմաններ եւ ազդակներ ալ ունեցած են իրենց դերը: Ասոնցմէ գլխաւորն էր այն ահաւոր համազգային աղէտը, որ պայթեցաւ Թուրք ժողովուրդին գլխուն երբ ռազմական մեծ համբաւ վայելող Օսմանական բանակը 1912ին ջախջախիչ պարտութիւն մը կրեց: Սա պատերազմ մըն էր, որով Թուրքերը փորձեցին ամենավայրագ միջոցներով ճզմել եւ խորտակել ապստամբող Պալքանեան ազգերը, յատկապէս, Պուլկարները, Յոյները եւ Մակեդոնացիները Սերպերուն հետ, որոնք կը հիւծէին Թրքական տիրապետութեան լուծին տակ: Անկախ այս պարտութեան հետեւող ռազմաքաղաքական նուաստացումէն, տասնեակ հազարներու հասնող մահմետական գանգուածները, խուժապահար եւ այլայլած, իրենց շունչը առին Իսթանպուլ՝ յոյժ եղկելի վիճակով: Ատկէ բխաւ հակաքրիստոնեայ ատելավառ պոռթկումը իր աղէտալի հետեւանքները ունեցաւ Թրքահպատակ հայ զանգուածներուն համար:*

*Արդարեւ, դժբախտ իրողութիւն մըն է որ հայկական ցեղասպանութեան յետագայ կազմակերպման մէջ այս գաղթական զանգուածները գլխաւոր դերակատարներ հանդիսացան: Պիթլիս (Բաղէշ) նահանգի կուսակալ Մուսթաֆա Ապտիւլ Հալիգ Ռէնտա, զոր օրինակ, որ յետոյ Թուրք հանրապետութեան քեմալական կազմաւորման մէջ մեծ դեր մը խաղաց, ատոնցմէ մէկն էր: Մուշ քաղաքի եւ անոր առնչակից մշոյ դաշտի 80,000 է աւելի հայերը այս մարդն էր որ ամենավայրագ կերպով կոտորել տուաւ, յատկանպէս մարախներու եւ ախոռներու մէջ, ինչպէս եւ կարգ մը եկեղեցիներու մէջ, զանոնք ողջ-ողջ այրելով:*

*Ստոյգ է որ Համաշխարհային Պատերազմի դժնդակ պայմանները մեծապէս դիւրացուցին այդ ոճիրին մտայղացումը եւ իրագործումը: Քաղաքացիական եւ իրաւական սովորական երաշխինքերը ակնթարթօրէն օդը ցնդեցան: Ռազմական պայմաններով ստեղծուած Պաշարման վիճակի* (martial law ) *խստաշունչ իրաւակարգը մեծապէս օգնեց, որ հայ զանգուածները բոլորովին ուժաթափ ըլլան շնորհիւ սահմանադրական իրաւունքներու առժամանակեայ առկախացման: Ահա այս խոցելիութիւնն էր որ յետագայ Թրքական բնաջնջումի ծրագրին ազդանշանը հանդիսացաւ, ճիշդ այնպէս ինչպէս քառորդ-դար յետոյ պատահեցաւ հրեաներուն:*

*Այս Մեծ Ոճիրը կարելի չէ տարանջատել նոյնքան վիթխարի եւ յարակից տնտեսական մեծ ոճիրէն որ համատեղօրէն գործադրուեցաւ: Տատրեան չեշտակիօրէն կ'անդրադառնայ այս իրադրութեան: Հայկական կուտակուած վիթխարի հարստութիւններ, սեփական թէ համայնքային-ազգային, ապասեփականացուելով եւ գրավուելով, բիրտօրէն փոխանցուեցան Թուրք ընտանիքներու եւ անհատներու, մեծ մասամբ ջարդարարներու ընտանիքներուն: Այս ընկալումով Տատրեան կ'եզրակացնէ, որ 1915 ի Մեծ Ոճիրը ֆիզիքական լայնատարած բնաջնջումը պայմանաւորող բայց նոյնքան լայնատարած եւ ամեհի կողոպուտ մըն էր:*

# ԱՐԵՆԻԻ ՄԷՋ ՅԱՅՏՆԱԲԵՐՈՒԱԾ Է ԱՒԵԼԻ ՔԱՆ ՀԻՆԳՀԱԶԱՐԱՄԵԱՅ ԶԳԵՍՏ



*Արենիի մէջ յայտնաբերուած է աշխարհի հնագոյն հագուստներէն մէկը՝ 5065 տարեկան ծղօտէ զգեստը: Այս մասին հաղորդեց "հայլուր"ը:*

*Գտածոյի տարիքը որոշուած է Քալիֆորնիայի համալսարանի մասպեկտրոմեթրիալ հետազօտութեամբ: Հագուստի մեծաքանակ մնացորդներէն առաջինը բացուած փոքրիկ կտորն իսկ ապշեցուցած է շատ բան տեսած հնագէտները: Երկգոյն ծղօտով հիւսուած զգեստը այնպիսի տեսք ունի, կարծես ան երէկ ձգուած ըլլայ քարայրի մէջ: Օրկանական նիւթերը այստեղ բնական եղանակով մումիացուած են շատ աւելի լաւ, քան՝ եգիպտական բուրգերու մէջ:*

*Քարայրի բացառիկ միկրոկլիմայի եւ իրենց յայտնաբերած հագուստի շնորհիւ հնագէտները շուտով կրնան միացնել գտնուած կտորները եւ ցոյց տալ, թէ ինչ կը հագնէր քիչ թէ շատ ունեւոր կինը Ք.ա. 39-րդ դարուն:*

*Յիշեցնենք, որ ամիսներ առաջ այստեղ՝ Արենիի քարայրի մէջ յայտնաբերուած էր աշխարհի հնագոյն կօշիկը, անկէ որոշ ժամանակ անց բացուած էին գինիի կարասներ: Քարայրի անկրկնելի միկրոկլիմայի շնորհիւ գտածոները պահպանուած են շատ լաւ, եւ զանոնք ներկայացնող գիտնականները կը հաւաստային, որ պեղուած գտածոներու հետազօտութեամբ առաւել լաւ կը ճանչնանք մեր նախնիներն ու անոնց կենցաղավարութիւնը:*


ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE.
PASADENA
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՀԵՌԱՁԱՅՆԵԼ
(626) 797-7680

ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԱԾ
ST. GREGORY ARMENIAN CHURCH
Geragos BANQUET HALL OF PASADENA
NEWLY REMODELED



Now ready to host your
• Wedding
• Baptism
• Anniversaries
• All other happy & sad events.
• Հարսանիք
• Մկրտութիւն
• Տարեդարձ
• և ամէն ուրախ ու տխուր առիթներ:
ՎԱՀԷ 562-715-8730 VAHE
Լաւագոյն և յարմարագոյն գիներով ձեզ կ'սպասարկենք

# «ՄԻՋՈՒԿԻ ՏՐՈՀՈՒՄԸ»

(Սփիւռքահայ Գրականութեան Պատմութիւն
Հատոր Ա. Ներածութիւն
Հեղինակ՝ Դոկտ. Սուրէն Դանիէլեան, Երեւան, 2011, 408 էջ)

***ԱՐԱՄ ՍԵՓԵԹՃԵԱՆ***

*Սփիւռք, որ սկիզբ առաւ իբրեւ «Աշխարհասփիւռ Տարագիր Արեւմտահայութիւն», 1920-ական առաջին տարիներու արմատախիլ հայութեան համախումբ բռնագաղթովը դէպի Մերձաւոր Արեւելեան, եւրոպական եւ ամերիկեան երկիրներ:*

*Ուրեմն, տարագիր այս սերունդին բերած մշակութային ժառանգութիւնն ու վերապրող արեւմտահայ գրական դէմքերու նոր ժամանակներու ստեղծագործութիւններն են, որ կը կազմեն հիմքը «Սփիւռքահայ Գրականութեան», իբրեւ շարունակութիւն նախաեղեռնեան արեւմտահայերէնով ստեղծուած գեղարուեստական արձակի, բանաստեղծութեան, թատերագրութեան եւ գրականութեան: Աւելի քան տասնեակ մը արեւմտահայ գրողներ, գլխաւորութեամբ Զօպանեանի, Շանթի, Թէքէեանի եւ Օշականի եւ «Սփիւռքահայ Գրականութիւն»ը ստացաւ յատուկ դիմագիծ եւ ստեղծուեցան երկրի կարօտն ու Ցեղասպանութեան արհաւիրքը գրականացնող արձակ ու չափածոյ երկեր:*

*Յակոբ Օշականի «Հայ Գրականութիւն» դասագիրքի «Անմիջական Գրականութիւն» բաժինը (էջ 629-675), ընդհանուր յայտարարի ներքեւ կը բերէր առաջին քսանամեակի (1922-1940) գրական փաղանգին յիսնեակ մը գինուորագրեալները: Երախտաշատ այս աշխատանքը շարունակուեցաւ գրչի այլ աշխատաւորներու կողմէ, հասնելով մինչեւ Վազգէն Գաբրիէլեան, Գերսամ Լ. Սեւան եւ այսօր՝ Սուրէն Դանիէլեան, որ կը ներկայացնէ մեզի Ա. գիրքը նախատեսուած իր եռահատոր շարքին: Երկ մը, որուն հեղինակը 1990-էն լոյս ընծայած էր «Ամերիկահայ Վիպագիրներ», 1992-ին՝ «Սփիւռքահայ Վէպը. Ժանրը, Աւանդոյթները, Պատմութեան Փիլիսոփայութիւն»ը, 1996-ին՝ Ռոպէր Հատտէճեանի գրականութեան նուիրուած մենագրութիւնը («Ներաշխարհի Գեղարուեստական Քննութիւն»), 1999-ին՝ «Բանաստեղծութեան Ազատագրումը Զարեհ Խրախունի» գեղագիտական վերլուծումի փորձագրութեան ու տասնեակէ աւելի սփիւռքահայ հեղինակներու երկերու խմբագրական աշխատանքներ՝ իրենց յառաջաբաններով եւ ծանօթագրութիւններով:*

*Եւ մեծ մասը այս ամէնուն ներառեալ՝ ներկայ հատորը, պատրաստուած եւ հրապարակուած է դասական ուղղագրութեամբ, իբրեւ գործնականացուած առաջարկ՝ ապահովելու հայրենի պետական եւ ակադեմական հեղինակութիւններուն վաւերացումը, որպէսզի վերջնական վերադարձ մը կատարուի դէպի համընդհանուր միացեալ եւ դասական ուղղագրութիւն:*

*Այս ծիրէն ներս, ի՛ր իսկ հիմնադրած «Սփիւռքի Գեղարուեստական Կեդրոն»ը, տասնամեակէ մը ի վեր կը կատարէ ուսուցչական եւ մանկավարժական եզակի առաքելութիւն մը, լաւագոյնս ծանօթացնելով արեւմտահայ դասական թէ նորագոյն ժամանակներու գրական ստեղծագործութիւնը Երեւանի Մանկավարժական Համալսարանի ուսանողներուն: Արժանիք մը որ ներկայիս մեծապէս կը գնահատուի հայրենի գրական եւ կրթական հեղինակութիւններու կողմէ:*

*Սուրէն Դանիէլեանի սփիւռքահայ գրականութեան ներածական բաժինը՝ ընթերցողին կը ներկայանայ մասնագիտական լուրջ բովանդակութեամբ:*

*«Միջուկ»ը, գրական-ստեղծագործական այն արտադրութիւնն է, որ սկիզբ առաւ արեւմտահայ զանգուածի արդի աշխարհաբարի զարգացումներով 19-րդ դարու Բ. կէսէն ետք ու իբրեւ ակունք դարձաւ «Հայ Գրականութիւն» երկճիւղանի ծառաբունին հիմնական կէսը, իրագործուած՝ արեւմտահայերէնի քերականութեան ու բառապաշարի ողջ հպարտութեան գիտելիքներով, եւ հայրենի հողին (Արեւմտահայաստան) կենսատու աւիշով:*

*Ներկայ հատորին մէջ, հեղինակը նախ կ՚անդրադառնայ «Սփիւռքահայ գրականութեան ակունքներուն»: Կը վերլուծէ «Ժամանակ»ի գործօնը, գրական ընթացքներու ձեւաւորումին մէջ կը տեղադրէ քաղաքա-ընկերային եւ մշակութային հիմքեր: Ապա, հայ գրականութիւնը իբրեւ մէկ ամբողջութիւն առնելով՝ Թումանեանի եւ Զարենցի ստեղծագործութեանց հետ զուգահեռաբար Օշական-Թէքէեան-Խրախունի եռեակը կը վերլուծէ Րաֆֆիի եւ*

*Ահարոնեանի արձակին մէջ գտնուող «ազգային երազանք» նախատարրերը սփիւռքահայ նորակազմ գրողներուն կը մօտեցնէ, «Կարօտ»ի եւ «Նահանջ»ի շարժումները կը վերլուծէ, կը քննարկէ զանոնք եւ էջատակի ծանօթագրութիւններով կու տայ կենդանի օրինակներ իր ընտրած հեղինակներէն:*

*Նոյն սկզբունքներով կը վերլուծէ օտարալեզու սփիւռքահայ գրողներու ստեղծագործութիւնները: Օտարագիր բանաստեղծներէն Ռուբէն Մելիքը, Շարլ Ազնաւուրը, Տայանա Տէր Յովհաննէսեանը եւ Ալիսիա Կիրակոսեանը կը տրուին իրենց գրական դիմանկարներով: Գեղարուեստական արձակի մէջ՝ անգլերէնով Մայքըլ Առլէն, Ուիլիըմ Սարոյեան, Լեւոն Զաւէն Սիւրմէլեան, Փիթըր Սուրեան, Փիթըր Պալաքեան եւ Նենսի Գրիգորեան,*

*Շար.ը էջ 19*



# ՇՈՒՇԻԻ ԹԱՔՆՈՒԱԾ ՀՄԱՅՔՆ ՈՒ ԱԿՆՅԱՅՏ ՀՈԳՍԵՐԸ

*ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐԵԱՆ*

Ինչ-որ մի անտես, թաքնուած հմայք ունի Շուշին, յատկապէս նոր կառուցուող շէնքերն են սիրուն՝ կապտաւուն եւ սպիտակ երանգներով, որոնք ինչ-որ խորհրդաւոր ու նրբագեղ մի ստուեր են նետում քաղաքի վրայ առաւօտ վաղ ու մայրամուտին, նոր այցելուին մտովի խոստովանել տալիս, որ ուրիշ ոչ մի փոքրիկ քաղաքում կապտասպիտակ այս երանգը եւ մեծ քաղաքներին յատուկ ուրբանիստական շունչը չեն տեսել ու չեն զգացել միատեղ, ու եթէ չլսուեր շուշեցու բարբառը՝ անգամ մի պահ Շուշիի նորակառոյց անկիւնները կարելի էր շփոթել եւրոպական մեծ քաղաքների անկիւնների հետ: Սա կարելի է եւ հաճոյախօսութիւն անուանել, եւ ընդհակառակը, որովհետեւ, օրինակ՝ Շուշիի երկրագիտական թանգարանի տնօրէնը կը գերադասէր նկարում երեւացող կապտաւուն նորակառոյցների փոխարէն տեսնել մինչ այս կառոյցներն այստեղ կանգնած Շուշիի հին ու կոլորիտային շէնքերից մէկը, որը չգիտես ինչու քանդեցին:

Քաղաքն ապրում է հետտոնական ընդարմութեամբ, տօնի փշուրները դեռ ներկայ են՝ եռագոյն դրօշներն ու եռագոյնի երեք գոյներով երեքական դրօշներն ամէնուր են: Հիւրանոցներում եւ խանութներում մարդիկ խօսում են, թէ որքան շատ հիւր կար քաղաքում Արցախի անկախութեան քսանամեակին: Իմ տանտիրուհի տիկին Նայիրան, սակայն, այլ բան է ասում. որ Շուշի սկսել են աւելի յաճախ գալ ընդհանրապէս, որ նրբաքիմք տուրիստներն ու էկուրները սկսել են Շուշին գերադասել Ստեփանակերտից, որ այս քաղաքի գեղեցկութիւնը, նրբագեղութիւնն ու խաղաղութիւնը գրաւում է նրանց. յատկապէս գալիս են Ուրբաթ օրուանից՝ եռօրեայ հանգստի, եւ Երկուշաբթի վերադառնում: Ու այդ պատճառով տիկին Նայիրան իր փոքրիկ ու յարմար սենեակները նորոգել է ու փորձում է հիւրատան նիստուշարժ անել՝ եթէ մեծ հիւրանոցները չխեղդեն, գուցէ մի բան ստացուի:

Իսկ հիւրանոցային բիզնեսը խթանւում է Շուշիում՝ միայն Արցախի քսանամեակի նախօրէին երկու նոր հիւրանոց է բացուել, սա խօսում է այն մասին, որ գուցէ մի բան դուրս գայ այն ծրագրից, ըստ որի Շուշին մինչեւ 2020 թուականը մշակոյթի եւ զբօսաշրջութեան կենտրոն է նախատեսւում դարձնել: Այս փոքրիկ քաղաքը, որ պահում է Վարանդայի մելիքների ժամանակի արքունական նիստուկացի յիշողութիւնը, որ 19-րդ դարի վերջին վաթսուն հազար բնակչութեամբ Այսրկովկասի երրորդ քաղաքն է եղել, որը յաղթահարել է զանազան եւ ամէն տեսակի փանահխաների, իսկ ռուս-պարսկական պատերազմից յետոյ մշակութային եւ արհեստագործական մի առեւտրաշահ կենտրոն էր, 1992 թուականի Մայիսին կրկին ճանապարհ ընկաւ իր անցեալի փառաւոր ուղիներով, եւ երկար ճանապարհի է պատրաստուել:

Այն, ինչ մենք ասում ենք, սակայն, շուշեցուն կարող է մի քիչ վերացական թուալ, քանի որ բուն շուշեցին, տօնից տօն եւ յատկապէս նշանակալից առիթներով արտայայտուող անձնական եւ զանգուածային հպարտութեան զգացումից զատ թաթախուած է ամէնօրեայ չվերջացող պրոբլեմների մէջ, ու չնայած բոլորն են խոստովանում, որ մի հինգ-վեց տարի առաջուայ համեմատ, այո, Շուշին զարգացում ապրել է, բազմաթիւ նոր շէնքեր են շահագործման յանձնուել, «Հայաստան» համահայկական հիմնադրամն է մի շարք հաստատութիւններ նորոգում ու կառուցում, սակայն սովորական շուշեցու հոգսը բոլորովին էլ չի նուազում: Այնպէս որ՝ Շուշիի պրոբլեմներն անպակաս են. նախ եւ առաջ խմելու ջուրը, որ երկու-երեք օրը մէկ է հասնում սպառողին, սպառողն էլ դա հաւաքում է համապատասխան տարաներում, որ օրուայ հոգսը հոգայ: Միւս պրոբլեմը ճանապարհներին են, կարեւոր եւ կենտրոնական լաւ սարքուած մի քանի ճանապարհների կողքին՝ Շուշիի թաղամասերը կապող փողոցները յիշեցնում են սովորական գիւղական եւ չասֆալտուած, երբեմն անանցանելի հողուղիներ: Քաղաքում բազմաթիւ են քանդուած շէնք-շինութիւնները, որոնք տուեալ տարածքին լքեալ գօտու երեւոյթն են տալիս: Գործազրկութիւնը մշտական վտանգ ունի իր մէջ՝ արտագնայ աշխատանքի մեկնողների նոր հոսքերի ստեղծման առումով, իսկ այս զանգուածը եւ ունեւորների մի շերտ տարեցտարի լրացնում են աւելացող այն մարդկանց թիւը, որոնք ունեցած բնակարանների դռները փակելով՝ մեկնում են երկար տարիներով: Այստեղից էլ Շուշիի ամենակարեւոր պրոբլեմներից մէկը՝ փակուած բնակարաններ եւ առանձնատներ, հողատարածքներ, որոնք տարիներով տիրոջ շունչ չեն զգացել՝ արգելակելով Շուշիի զարգացումը, քանի որ, ինչպէս Շուշիի քաղաքապետն էր ասում, Շուշիում բաշխելու տարածք, բնակարան այլեւս չկայ, բոլորն արդէն բաշխուած են: Քաղաքացիների կարծիքով՝ նախկին քաղաքապետը փորձել է դատարկ, բայց տէր ունեցող տների եւ տարածքների օգտագործման օրէնսդրական ու գործնական ուղիներ փնտռել, ու գուցէ դա էլ պատճառներից մէկն է եղել նրա պաշտօնավարման աւարտի, քանի որ այդպիսի տներ եւ տարածքներ ոչ միայն շուշեցի, այլեւ ստեփանակերտցի եւ երեւանցի շատ հզօրներ ունեն, նրանց նախկին քաղաքապետը խիստ զայրացրած է եղել:

Բոլոր այս, եւ մի շարք այլ պրոբլեմների մասին զրուցել ենք Շուշի ներկայ քաղաքապետ Կարէն Աւագիմեանի հետ, որն այս հարցերի պատասխանը որոշ առումով գիտէր, այդ մասին մեր յետագայ հրապարակումներում կը պատմենք: Ասենք առայժմ, որ փակ տարածքների վերաբերեալ Շուշիի սովորական քաղաքացիները, չիմանալով գուցէ օրէնսդրութիւնը սեփականութեան իրաւունքի մասին, շատ արմատական առաջարկներ էին անում, թէ՝ թող փողը տան, հետ վերցնեն սեփականատէրերից, եթէ իրենք չեն օգտագործում, մանաւանդ՝ չտաքցուող բնակարանները ձմրանը խնդիրներ են առաջացնում, կծել-դրել են որ ինչ: Միւս առաջարկը այն էր, որ պարտադրեն տների բացակայ սեփականատէրերին միջինում ընտանիքի ծախսի չափով կոմունալ վարձեր մուծել, որ քաղաքն էլ կարողանայ իր խնդիրները լուծել. «Էս չորս հազար բնակիչով քաղաքը հօ կրակը չի՞ ընկել բացակայ երեսուն տոկոսի ձեռքը», ասում էին շուշեցիք: Օրինակ՝ մի շէնք կար, որ տրուած էր Արցախի գրողների միութեանը, մի քանի անգամ հրդեհ է ընկել՝ մի կերպ հանգցրել են, ոչ տէրերը գալիս են, ոչ տիրութիւն են անում:



Մինչեւ տարուայ վերջ նորութիւն կը լինի Շուշիում՝ մշակոյթի նախարարութիւնը կը տեղափոխուի Շուշի, նորոգուող Մարիամեան կրթական հաստատութեան շէնք, իսկ եկող-միւս տարի դատական համակարգն աստիճանաբար կը տեղափոխուի Շուշի, Երեւանի ագրարային համալսարանի այժմ կառուցուող մասնաճիւղում տեղացի ուսանողները կը սովորեն: Ֆրանսահայ բարերարները արհեստագործական ուսումնարան են սկսել կառուցել՝ այս կարգի բազմաթիւ ծրագրեր կան, մի մասն էլ արդէն իրականացւում է: Քաղաքի կեանքի ցուցիչը սովորաբար աշակերտներն են լինում, դրանց թիւը վեց հարիւրն է, այնպէս որ՝ այս թուի վրայ եթէ կառուցենք բնակչութեան թուի վերաբերեալ ոչ պաշտօնական մեր պրոգնոզները եւ կանխաւ չհաւատանք քաղաքի ղեկավարութեան ասած չորս հազարին, էլի այդ չորս հազարը կը ստացուի, չհաշուած, որ Շուշիում այսօր շատ են դրսեկները, նաեւ Երեւանից եւ Ստեփանակերտից եկած վարձու աշխատողները: Այս բոլորի հետ միատեղ՝ շուշեցիներից շատերի հետ մեր զրոյցները տպաւորութիւն էին ստեղծում, որ հասարակ շուշեցին քաղաքը վերակառուցելու, զարգացնելու խնդիրն իրենը չի համարում նաեւ, ինչպէս նկարիչ Յովիկ Գասպարեանն էր ասում՝ «պետութիւնը մենք ենք, սովորական մարդիկ» կարգախօսը նրանցից քիլոմեթրով հեռու էր մնացել, եւ դրա համար մի շարք պատճառներ կային:

Ընդհանուր այս տեղեկութիւնները փոխանցելով Շուշի այցելութեան ընթացքից, խոստանանք սակայն, որ առաջիկայում աւելի համակարգուած կը պատմենք Շուշիի, նրա մարդկանց եւ քաղաքի հոգսերի մասին:



# ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆԸ.. 10 ՊԱՏՈՒԻՐԱՆ

*Առաջին անգամ՝ առաջին դասարան. դա միայն տօն չէ, այլեւ մեծ սթրես: Նախադպրոցականին հատուկ անհոգութիւնը, խաղով լի օրը փոխարինւում է պահանջներով, պարտականութիւններով ու սահմանափակումներով: Հիմա երեխան ամէն օր պէտք է դպրոց յաճախի, պարբերաբար ու լարուած աշխատի, հետեւի օրակարգին, զանազան օրէնքների ու կանոնների, պահանջներ կատարի: Բժիշկները նշում են, որ առաջին քառորդի վերջում շատ երեխաներ նիհարում են, բողոքում գլխացաւից ու դառնում քմահաճ:*

*Ճիշտ է, որ տարրական դասարանի երեխան պառկի քնելու ժամը 21-ին: Հակառակ դէպքում երեխայի օրգանիզմը լիարժէք չի վերականգնւում ու, հետեւաբար, նոր լուրջ ծանրաբեռնուածութեանը չի դիմանում: Այս օղակում երեխայի նորմալ զարգացման համար հանգիստը միակ նախապայմանը չէ: Կարեւոր է նաեւ ճիշտ ու առողջ սնունդը: Երեխայի օրաբաժնում պէտք է պարտադիր 400գ միրգ ու բանջարեղէն լինի, ինչպէս նաեւ կաթ ու կաթնամթերք: Երեխայի նորմալ աճի համար պարտադիր են միսը (ամէն տեսակի), ձուկն ու ձուն: Ցանկալի է օգտագործել յօդացուած աղ: Հոգեբանները թախանձագին խնդրում են ծնողներին՝ երբեք ձեր երեխայի արդիւնքները մի համեմատէք աւելի յաջողակ երեխաների ձեռքբերումների հետ: Աւելի լաւ կը լինի ընդհանրապէս չհամեմատել ինչ-որ մէկի հետ: Ցիշէք ձեր մանկութիւնը:*

## 10 պատուիրան մայրիկների ու հայրիկներ համար

*1. Սկսէք «մոռանալ», որ ձեր երեխան փոքր է: Տանը նրան իր ուժերի ներածին չափով գործի դրէք: Ու, որ կարեւոր է, մի կարգադրէք, արէք դա մեղմօրէն, ասենք. «Այնքան մեծացել ես, որ նոյնիսկ կարելի է քեզ վստահել այս գործը» (փոշին մաքրել կամ էլ՝ ափսէ լուանալ):*

*2. Որոշակիացրէք ձեր հետաքրքրութիւնների շրջանակը. դրանք կարող են լինել ճանաչողական (սիրելի մուլտֆիլմեր, հեքիաթներ, խաղեր) եւ կենցաղային (ընտանեկան հոգսերի քննարկումներ): Մասնակցէք ձեր երեխաների սիրած զբաղմունքներին կամ էլ պարզապէս ոչ թէ նրանց «կողքին» եղէք, այլ նրանց «հետ»: Դրա համար բաւարար է, ասենք, միասին ֆիլմ դիտելը կամ խաղալը: Երեխայի հետ զրուցէք նրան յուզող հարցերի շուրջ:*

*Շփուէք նրա հետ, դրա պական ընտանեկան դաստիարակութեան գլխաւոր արատներից մէկն է:*

*3. Երեխային մասնակից դարձրէք ընտանիքի տնտեսական խնդիրներին: Սովորեցրէք համեմատել գները, կողմնորոշուել ընտանեկան պիւտճէում (ասենք, դրամ տուէք երեխային պաղպաղակի համար՝ համեմատելով դրա գինը այլ մթերքի գնի հետ): Միասին խանութում գնումներ կատարէք:*

*4. Մի խրատէք ու, առաւել եւս, մի նախատէք ուրիշների ներկայութեամբ: Յարգէք ձեր երեխայի զգացմունքներն ու կարծիքը: Նոյնիսկ ուսուցչի դիտողութեանը պատասխանէք. «Շնորհակալութիւն, մենք տանն այդ հարցը կը քննարկենք»: Ցիշէք յայտնի մանկավարժական օրէնքը՝ վստահել, վատը չհամարել, հաւատալ յաջողութեանն ու ունակութեանը («դու կարող ես, ես քեզ հաւատում եմ» խրախուսական խօսքերով):*

*5. Սովորեցրէք երեխային պատմել իր խնդիրների մասին: Միասին քննարկէք վիճայարոյց իրավիճակները, որոնք առաջացել են տարեկիցների շրջանում կամ մեծահասակների հետ: Անկեղծօրէն հետաքրքրուէք նրա կարծիքով, միայն այդ կերպ կարող էք կեանքի նկատմամբ ճիշտ վերաբերմունք ձեւաւորել: Փորձէք իրավիճակն օբիեկտիւօրէն գնահատել. միշտ ձեր երեխան իրաւացի, իսկ ուրիշները՝ սխալ դիրքորոշումը ճիշտ չէ:*

*6. Ցաճախակի զրուցէք երեխայի հետ: Խօսքի զարգացումը նաեւ լաւ սովորելու գրաւականն է: Եթէ գնացել էք թատրոն, թող պատմի տեսածը, տպաւորութիւնները: Նրան ուշի-ուշով լսէք, հարցեր տուէք, որպէսզի երեխան հասկանայ, որ դա իրօք ձեզ հետաքրքիր է: Միասին ֆանտաստիկ պատմութիւններ յօրինէք իրերի, առարկաների, բնութեան երեւոյթների վերաբերեալ: Ձեր երեխան պէտք է կարողանայ յօրինել ու ստեղծագործել:*

*7. Պատասխանէք երեխայի իւրաքանչիւր հարցին: Միայն այդ դէպքում երեխաների ճանաչողական հետաքրքրութիւնը չի մարի:*

*Ցաճախակի դիմէք նաեւ տեղեկատու գրքերին (ասենք՝ բառարաններ ու հանրագիտարաններ): Սովորեցրէք նրանց ինքնուրոյն օգտուել դրանցից, ոչ թէ սպասել, թէ դուք ինչպէս կը բացատրէք իր հարցը:*

*8. Փորձէք գոնէ մէկ-մէկ աշխարհին նայել նրա աչքերով: Աշխարհին ուրիշի աչքերով նայելը փոխըմբռնման հիմքն է: Իսկ դա նշանակում է՝ երեխայի անհատականութեան հետ հաշուի նստել, հասկացնել, որ մարդիկ տարբեր են լինում եւ իրաւունք ունեն տարբեր լինելու:*

*9. Ցաճախակի գովէք ու հիացէք ձեր բալիկով: Նրա բողոքներին ի պատասխան յաճախ ասացէք, որ «ամէն ինչ կը լինի, պարզապէս պէտք է փորձել»: Ինքներդ էլ հաւատացէք, որ ձեր երեխան ամէն ինչ կարող է, պարզապէս պէտք է նրան օգնել: Խրախուսէք խօսքով, ժպիտով, քնքշանքով, ոչ թէ բաւարարուէք նոր իր կամ քաղցրաւենիք գնելով:*

*10. Ձեր երեխաների հետ յարաբերութիւններն արգելքների վրայ չպիտի յենուեն: Համաձայնէք, որ դրանք միշտ չէ, որ ճիշտ են լինում: Բացատրէք, որ ձեր պահանջները հիմնաւորուած են, եթէ հնարաւոր է, առաջարկէք այլընտրանքային տարբերակ:*

*Երեխայի հանդէպ յարգալից վերաբերմունք ձեւաւորէք ձեր մէջ՝ հիմա եւ ապագայում: Ձեր պահանջները ձեւակերպելիս երբեք մի առաջնորդուէք »եթէ»-ով: Երեխան շուտ է իւրացնում «դու՝ ինձ, ես՝ քեզ» դիրքորոշումը:*

massispost.com
daily news updates

# ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ՊԱՀԱՊԱՆ ՀԱԶՐԵՎԱՐԴԸ

*ՋՈՒԼԻԵՏԱ ՍԱՀԱԿԵԱՆ*

*Հազրեվարդը (Rosemary, ռոզմարին) մշտադալար բոյս է, հին ժամանակներից աճել է Ադրիատիկ ծովի եւ Կոլխիդայի ծովափնեայ շրջաններում: Այն համարւում է յաւերժութիւն, իմաստութիւն եւ ճշմարտութիւն խորհրդանշող Աստուածատուր ծաղիկ: Այս յիշատակութիւնների հետ զարմանալիօրէն համահունչ են բոյսի հետեւեալ հայերէն անուանումները՝ լուացտակի ծառ, լուսնատակի, խնկունի:*

*Հազրեվարդի եւ ուրցի տերեւները ծխել են տաճարներում՝ որպէս աստուածատուր բոյսեր: Հռոմէացիները համարել են, որ հազրեվարդը մարդուն ուրախութիւն, երջանկութիւն է պարգեւում, պահպանում է երիտասարդութիւնը, զերծ է պահում չար տեսիլքներից: Առնուազն 812թ. Կարլոս մեծի հրամանով հազրեվարդը սկսել են մշակել Եւրոպայում, օգտագործել են որպէս համեմունք՝ աղցանների եւ թանձր կերակրահիւթերի մէջ, պատրաստել գինի, դրել պահարանում՝ որպէս ցեցի դէմ պայքարելու միջոց:*

*Սնունդի մէջ օգտագործում են լաւ մանրացրած վիճակում, եփելիս այն կորցնում է եթերային իւղերը: Հազրեվարդի մեծ քանակութիւնները կարող են վնասել առողջութեանը, այն չի կարելի խմել քնելուց առաջ, քանի որ հնարաւոր է՝ յառաջանայ անքնութիւն: Հազրեվարդը թեթեւակի բարձրացնում է ճնշումը, խոտոր են հակացուցուած է յղիներին:*

*Հազրեվարդն ունի հաճելի, չափաւոր քաղցր համ, յիշեցնում է կամֆարան: Տերեւների մէջ պարունակւում է եթերային իւղ՝ հազրեվարդի հումքի հիմնական մասը վերամշակւում է եւ օգտագործւում օդեկոլոնի, օճառահեղուկի, օճառի արտադրութիւնում: Բոյսի տերեւները հաւաքում են ծաղկման շրջանում կամ մի փոքր ուշ, երբ եթերային իւղի պարունակութիւնը առաւելագոյնն է: Եթերային իւղում կայ մօտ 30 տոկոս պինեն, 17-30 տոկոս ցինեոլ (կայ նաեւ դաղձում) եւ այլ տերպեններ: Բոյսը պարունակում է նաեւ մինչեւ 10 տոկոս տանին, 8 տոկոս դաբաղանիւթ, ֆլաւոններ, բուրումնաւէտ թթուներ (յատկապէս հազրեվարդի թթու) բուսական ստերոիդներ: Հազրեվարդը պարունակում է մեծ քանակութեամբ հակաօքսիդանտ նիւթեր, բոյսը դանդաղեցնում է վաղաժամկէտ ծերացումը: Հազրեվարդն ունի լեղամուղ, միզամուղ, խորխաբեր, հակաբորբոքային, հակակարկամային յատկութիւն, այն ուժեղացնում է լեարդի աշխատանքը եւ նպաստում այդ կարեւորագոյն օրգանի մաքրմանը թոյներից: Հազրեվարդը խորհուրդ է տրւում սիրտ-անօթային եւ աղեստամոքսային հիւանդութիւնների, բոլոր տեսակի այտուցների, փքուածութեան, փորկապութեան, շնչառական ուղիների հիւանդութիւնների, գլխացաւերի, գլխապտոյտի, հիստերիայի, ընկնաւորութեան դէպքում: Հազրեվարդի պատրաստուկներն օգտակար են փահանաձեւ գեղձի աշխատանքը կարգաւորելու համար, ցածր ճնշման դէպքում, կանխում են կատարակտի զարգացումը: Ուրցի հետ օգտագործման դէպքում (1:1) ուժեղանում է հազրեվարդի վարակամերժ եւ հանգստացնող յատկութիւնը: Հազրեվարդի թուրմը աւելացնում է կերակրող մայրերի կաթը:*

*Թուրմ հազրեվարդի տերեւներով*

*Ջոր հումքի 1 ճ/գ-ն 30 րոպէ թրմէք 200 մլ եռջրի մէջ, քամէք, բաժանէք 3 մասի, խմէք օրուայ ընթացքում, մինչեւ երեկոյ:*

*Թէյ*

*1 ճ/գ հումքը թրմէք 200 մլ եռջրում, քամէք, խմէք գոլ վիճակում:*

*Կոկորդի եւ բերանի ողողումների համար թուրմը պատրաստէք 2 ճ/գ հումքով:*

*Տեսողութեան լաւացման համար*

*- Հազրեվարդի չոր տերեւները մէկ շաբաթ թրմէք օղու մէջ (1:10): Առաջին երեք օրը պարբերաբար թափահարէք տարան: Ոգեթուրմը լաւ զտէք, խառնէք զտուած ջրի հետ (1:4) եւ դրէք թրջոցն աչքերին, բաւարար է, որ բոլորը միասին լինի 5 թ/գ:*

*Ոգեթուրմի եւ ջրի յարաբերութիւնը մի քանի օրից կարելի է հասցնել 1:2: Միաժամանակ պատրաստէք (1:6) կոճապղպեղի ոգեթուրմ: Թրմելու ժամկէտը՝ 15 օր,*

*Շար.ը էջ 19*

## ԱՌԱՋԻՆ ԶԱՆԳ
### ԱԼՊԵՐՏ ԳՐՔԱՇԱՐԵԱՆ

Ու ես կ'երթամ դէպի աղբիւրը լոյսին (Դ. Վարուժան)

Դու, առաջին զանգ, դու իմ առաջին
Ամենաբիւրեղ ու անկրկնելի
Քաղ:ցր ղօղանջը՝ որ իմ ականջին
Երգեցիր վճիտ Աղբիւրը լոյսին:

Եւ ինձ զարթնեցրիր մանկական քնից,
Ցոյց տալով ուրախ դպրոցին ճամբան
Եւ աւետումը՝ «Այբ-բեն »արանիս,
Որպէս բանալին գիր ու գիտութեան:

Որպէսզի երբեք եւ ոչ մի դէպքում,
Թէկուզ անթափանց գիշերներում ուք
Չխարխափելու եւ ոչ մի անկիւն
Բացելու համար դուռ կամ լուսամուտ:

Եւ սրտիս վրայ անջինջ դաջեցիր
Սէրն հայրենեաց՝ վեհ ու սրբազան
Ու հոգիս կապել քո անծայրածիր
Սահմաններիդ հետ խոր իմացութեան:

Դու առաջին զանգ, դու իմ առաջին
Շրթերիս բացուած երգ լուսաբացի
Եւ հոգիս տանող դէպի երկնային
Արեւներ հասնող Աղբիւրը Լոյսի:

# ԻՆՉՈ՞Ւ Է ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹԻՒՆԸ ՃԳՆԱԺԱՄԻ ՄԷՋ

*Շարունակուած էջ 7-էն*

*մանիտար գիտութիւնների որոշ ճիւղերի, առաւել եւս՝ ՁԼՄ-ների մէջ, միայն թէ լաւի կամ հնագոյնի տեղը ռուսականի փոխարէն զբաղեցնում է հայկականը: ԱԳ ունեցող ժուռնալներում այսպիսի հաստատումներ կատարելու եւ նրանք լաւ պաշտպանել կարողանալու համար, հեղինակը պարտաւոր է քաջածանօթ լինել իր հետաքրքրուած բնագաւառում միջազգային փորձին՝ աւելորդ քննադատութիւնների տեղիք չտալու համար:*

*Բացի դա, Հայաստանի պատմագրութիւնը հիմնականում քաղաքական պատմութիւնն է ուսումնասիրում: Նոյնիսկ մարքսիզմի այն գաղափարը, թէ «պատմութիւնը զանգուածների պատմութիւն է» խորհրդահայ պատմագրութեան մէջ հետեւողականօրէն չի կիրառուել: Եթէ բացես խորհրդային եւ հետխորհրդային ժամանակներում տպուած պատմութեան դասագրքերը, էլի մեծ մասամբ այնտեղ քաղաքական պատմութիւն է, այսինքն՝ Տիգրան Մեծ, Վարդանանք եւ այլն. ժողովրդական զանգուածները այնտեղ համարեա չկան: Իսկ միջազգային նոր պատմագրութիւնը աւելի մեծ ուշադրութիւն է դարձնում քաղաքական պատմութեան կողմից անտեսուած խմբերին, մարգինալ շրջանակներին, օրինակ, կնոջ դերը, ընտանեկան յարաբերութիւնների էվոլիւցիան, մարմնավաճառութեամբ զբաղուողները, միգրացիոն ալիքները, սպառողների նախասիրութիւնների փոփոխութիւնները, եւ այլն, նոյնիսկ խորհրդային ժամանակների «օրէնքով գողերը»:*

*Պոստմոդեռնիզմին բնորոշ է նաեւ միկրոպատմութիւնների արծարծումը, երբ օրինակ, մէկ փոքր դէպք կ՛առնես եւ դրա շուրջ կը փորձես պատմական ընդհանրացումներ անել: Հայ պատմաբանները համարեա չեն անդրադարձել այս ժանրին: Յովիկ Չարխթեանի «Չարենցի կրակոցը», ուր Չարենցի կնոջ վրայ կրակելու պատմութիւնն է, նման է այս ժանրին, բայց Չարենցը նշանաւոր անհատ է: Եթէ առնես մի աննշան կերպար (ասենք մի բանուոր կամ կոլտնտեսական) ու նրա հետ պատահած մի հետաքրքիր դիպուածի համակողմանի պատմութիւնը գրես, դա կը լինի միկրոպատմութիւն, եւ իսկապէս այսօր արտասահմանեան շատ պատմաբանների համար մի գիւղացու կեանքի ուսումնասիրութիւնը յաճախ նոյնքան կարեւոր է թւում որքան մի թագաւորի կամ հանրայայտ գիտնականի»:*

*Հայ պատմագրութեան մէջ առ այսօր համարեա չի կիրառւում նաեւ պոստմոդեռնիստական գլխաւոր մօտեցումը՝ աւանդուած տեքստի նկատմամբ գերքննադատութիւնը: Ի վերջոյ, հին ժամանակների պատմութիւնը, ինչպէս նաեւ նորի կարեւորագոյն մասը, գրաւոր տեքստի վրայ է հիմնուած, իսկ պոստմոդեռնիզմը կասկածի տակ է առնում հենց տեքստի հաւաստիութիւնը: Պոստմոդեռնիստներն առարկում են. ինչքան պատմութեան փաստական նիւթը քիչ է, պատմաբանի միջամտութիւնը դէպքերի մեկնաբանութեան մէջ կը շատանայ, եւ նախկին սերնդի պատմաբանների կողմից անառարկելի համարուող ճշմարտութիւնները կարող է չդիմանան պոստմոդեռնիստական քննադատութեանը»:*

*Պոստմոդեռնիստները աւելի մեծ շեշտադրմամբ զգուշացնում են, թէ պատմութիւնը պէտք չէ արժեւորել հաշուի առնելով դէպքերի յետագայ ընթացքը: «Օրինակ, մենք ներկայիս արեւմտահայերի 19-րդ դարի առաջին կէսի եւ երրորդ քառորդի պատմութիւնը սովորաբար նայում ենք իբրեւ նախապատրաստութիւն հայ քաղաքական կուսակցութիւնների գործունէութեան: Բայց, ի վերջոյ, չպէտք է նաեւ մոռանալ, որ իրականութեան մէջ ոչ բոլոր հայերն էին ձգտում Օսմանեան կայսրութեան քայքայմանը: Միշտ էլ այլ տարբերակների կողմնակից հայեր եղել են՝ Օսմանեան կայսրութիւնը բարեփոխել, նոր փորմուլ գտնել բազմազգ պետութեան գոյատեւման համար եւ այլն: Երբ մէկ միտումը՝ թրքական եւ այլ ազգային պետութիւնների ստեղծումը յաղթեց, միւս այլընտրանքները համարեա մոռացուեցին պատմաբանների կողմից: Ժամանակակից պատմագրութիւնը հետաքրքրուած է նաեւ քաղաքական գետնի վրայ տանուլ տուած այսպիսի գաղափարական ուղղութիւնների պատմութեամբ: Պատմաբանների մօտ տարածուած խօսք կայ թէ «երբ պատմութիւնը կը գրես, միշտ յիշի, որ Վաթերլոյի ճակատամարտի առաւօտը վստահ չէիր, որ Նապոլէոնը պարտուելու է:»*

*Վահրամ Տէր-Մաթեւոսեանի օրինակը ցոյց է տալիս, թէ Հայաստանի մասնագէտներին հնարաւոր է տպագրուել նոյնիսկ ԱԳ ունեցող թրքագիտական ժուռնալներում: Իհարկէ, այդ ժուռնալները դեռեւս պատրաստ չեն անկաշկանդ քննարկելու ցեղասպանութեան հարցը (ներկայիս դա կարելի է անել ոչ-թրքագիտական ժուռնալներում), բայց հայ-թրքական բազմակողմ յարաբերութիւնների պատմութեան տասնեակ թեմաներ կան, որ Հայաստանի գիտնականները կարող են ազատօրէն ու խորը գիտականութեամբ բարձրացնել նոյնիսկ թրքագիտական ժուռնալներում: Օրինակ, դերասան Յակոբ Վարդովեանը դերեր է խաղացել եւ հայկական թատրոնում եւ թրքական թատրոնում, եթէ նրա վերաբերեալ գիտական յօդուած գրուի, յաջողութեամբ կը տպուի ԱԳ ունեցող թրքագիտական կամ այլ միջազգային ժուռնալում: Կամ, հայատառ թրքերէն եւ այլ նիւթեր ուսումնասիրելով՝ կարելի է գրել, օրինակ, թէ 19-րդ դ. օսմանեան ռեֆորմների հանդէպ հայերի մօտեցումները ի՞նչ են եղել: Ցանկացած արեւելագիտական, իսլամագիտական եւ թրքագիտական ժուռնալ կտպի այսպիսի թեմայով գրուած լաւ յօդուած: Եւ այսպիսով հայերը կարող են թրքագիտութեան ճամբարի մէջ մտնել եւ հանրածանօթ դառնալ սկիզբը օսմանեան կայսրութեան մասին գրելով, եւ ո՛չ անմիջապէս, առաջին իսկ րոպէից թրքագիտական ժուռնալների մէջ ցեղասպանութեանը անդրադառնալով: Իսկ մուտք գործելուց եւ ուրիշների յարգանքը վաստակելուց յետոյ արդէն նոյն գիտնականը կարող է նաեւ ցեղասպանութեան թեմայի մասին հեղինակաւոր յօդուած գրել, թերեւս մի օր նոյնիսկ նեղ թրքագիտական ժուռնալներու մէջ: Խօսքս, կրկնում եմ, բացառապէս ԱԳ ունեցող թրքագիտական ժուռնալներին է վերաբերւում:*

*«Այսպիսով, եթէ Հայաստանում հասարակական գիտութիւններում հասնենք այն մակարդակին, որ ե՛ւ վաստակաշատ ե՛ւ երիտասարդ գիտնականները կանոնաւորաբար յօդուածներ հրատարակեն ԱԳ ունեցող ժուռնալներում, ապա դա հայկական սկզբնաղբիւրներն ու հայագիտութեան նուաճումները միջազգային բեմահարթակի վրայ ներկայացնելու շատ յարմար առիթ կը հանդիսանայ»:*

*Բայց, ի՞նչ քայլեր են պէտք անել, որ հասարակագիտութեան ոլորտը զարգանայ այդ ուղղութեամբ.*

*Սանճեանը առաջարկում է.*

*«Բնականաբար նախ պէտք է պատրաստել հասարակագիտութեան միջազգային մտածողութեան ու պրակտիկային ծանօթ դասախօսների մի սերունդ, որ իր հերթին աշխատանքի անցնելուց յետոյ նոր ուսանողներին հենց բակալավրիատի առաջին կուրսից կամաց-կամաց ընտելացնի այս աշխարհին, մի աշխարհ որտեղ հայաստանաբնակ հայագէտը իրեն հաւասարապէս հարազատ զգայ եւ հայագիր հայագիտութեան եւ միջազգային հումանիտար գիտութիւնների ոլորտներում: Այդ մասնագէտը պէտք է շատ սահուն տիրապետի առնուազն մէկ արեւմտաեւրոպական լեզուի, կարողանայ այդ լեզուով գրել, դասախօսել ու բանավիճել, լաւ տիրապետի ինտերնետային տեխնոլոգիային, որպէսզի առաւելագոյնս օգտուի ինտերնետային փնտռտուքի ներկայացրած հնարաւորութիւններից, ինչպէս նաեւ այն շտեմարաններից, որին բաժանորդագրուել է իր ինստիտուտը կամ բուհը: Բնականաբար, Երեւանի գիտական գրադարանները օտարալեզու մասնագիտական գրականութեամբ եւ շտեմարանների բաժանորդագրութեամբ ապահովելը պահանջում է հսկայական նիւթական միջոցներ: Պէտք է նաեւ խոստումնալից մագիստրանտներին եւ ասպիրանտներին օժանդակութիւն տրուի որպէսզի ճամփորդեն արտասահման եւ մասնակցեն գիտաժողովների: Կարելի է պետհամալսարանում կամ ակադեմիայում ստեղծել յատուկ գրասենեակ, որ խմբագրական օժանդակութիւն կը ցուցաբերի ԱԳ ունեցող ժուռնալներին ներկայացնելու համար յօդուած գրող ասպիրանտներին կամ երիտասարդ դասախօսներին ու գիտաշխատողներին: Լուրջ ծրագրի առկայութեան դէպքում, այս համապարփակ ծրագիրը հնարաւոր կը լինի լուծել եւ գոհացուցիչ արդիւնքի հասնել 10-15 տարուայ ընթացքում:*

*«Վերափոխութեան տեմպերը աւելացնելու ցանկութեան պարագայում, հնարաւոր է դիմել աւելի արմատական քայլի եւ առկայ պատմութեան, լեզուաբանութեան, գրականագիտութեան, փիլիսոփայութեան, եւ այլն ամբիոններին զուգահեռ ստեղծել նոյն մասնագիտութիւնների նոր ամբիոններ, համալրուած արդիական այս մօտեցումներին համոզուած մասնագէտներով, որպէսզի նրանց այլեւս վարչականօրէն չկաշկանդուած ջանքերով եւրոպական ժամանակակից միտքը աւելի արագ ընկալուի, տարածուի Հայաստանում, տայ արագ պտուղներ, որոնցից մէկը կը լինի ԱԳ ունեցող ժուռնալներում հայաստանցիների աւելի յաճախակի տպուելը:*

*«Առանձին ամբիոն ստեղծելը կը դիւրացնի ուսանողների միջազգային գրականութեանն ու ժուռնալներին ծանօթացնելը: Եթէ արդէն իսկ հաստատուած եւ վաստակ ունեցող ամբիոններում ներկայումս նուիրուած ուսանողը ինքնուրոյն է գտնում դրանց տեղը, որովհետեւ դասախօսը այդպիսի բաներ չի յանձնարարում, ապա նոր ամբիոններում ի սկզբանէ այդ նիւթերը կը դառնան պահանջուած ծրագրի մաս: Հայաստանում բակալաւրիատում կամ մագիստրատուրայում կարելի է փորձարկել նաեւ մի խիզախ մօտեցում՝ նիւթի դասաւանդումը կատարել միաժամանակ եւ հայերէն եւ օտար լեզուներով, որպէսզի շրջանաւարտը հաւասարապէս տիրապետի երկու կամ երեք լեզուների, ի հարկէ՝ հայերէնը ներառեալ»:*

*Սանճեանն ասում է, որ արեւմուտքում նոր գաղափարները յաճախ իրենց ճամբան հարթել են ոչ այնքան հին ամբիոնների տեղը գրաւելով, այլ զուգահեռ նոր ամբիոններ ստեղծելով, որի արդիւնքում հնի ու նորի մէջ մրցակցութիւն է առաջանում: Այդ մրցակցութիւնը՝ յաճախ փոխադարձ մեղադրանքներով, սովորաբար տեւում է առաւելագոյնը 20-30 տարի, որից յետոյ նախկին «հնի» ու նախկին «նորի» միջեւ սահմանագիծը չքանում է:*

*«Արտասահմանի մէջ սա շատ անգամ է եղել. երբ նոր գաղափար է ծագում, որպէսզի չկաշկանդուի հին կառոյցով, նոր կառոյց են ստեղծում: Չեմ ասում թէ այս պարագայում Երեւանի պետհամալսարանի մէջ նորը պիտի ստեղծես, եւ պիտի լինեն նոյն մասնագիտութեան համար երկու տարբեր ամբիոններ հենց նոյն համալսարանում: Կարող է ուրիշ ինստիտուտի մէջ ստեղծուի նախկինում գոյութիւն չունեցող պատմութեան կամ հումանիտար այլ ոլորտի ամբիոն, եւ հենց սկզբից այնտեղ գործի կը վերցուեն նրանք ովքեր արտասահմանում սովորել են կամ նոր գիտահետազօտական ուղղութիւնների աներկբայ հետեւորդ են»:*

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave
Pasadena, CA 91107

Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

## ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ՆՈՒԻՐԱՏՈՒՆԵՐՈՒՆ

*Մեր երախտագիտական եւ շնորհակալական զգացումները կը յայտնենք «Մասիս» Շաբաթաթերթի ֆոնտին ի նպաստ կատարած հետեւեալ նուիրատուներուն:*

| | |
|---|---|
| Վերապատուելի Գառնիկ Հալլաճեան | $500 |
| Glendale West Drug Co. | $500 |
| Տէր եւ Տիկ. Գրիգոր եւ Վարդուհի Զոլաքեան | $200 |
| Sinanian Developement | $200 |
| Տէր եւ Տիկ. Զոհրապ եւ Արփինէ Զոլաքեան | $200 |
| Տէր եւ Տիկ. Նազարէթ Գեւոնեան | $200 |
| Տէր եւ Տիկ. Կարպիս Պալըգճեան | $200 |
| Մանուէլ Ճէզալեան | $100 |
| Տիգրան Ժամկոչեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Վարդան եւ Լուսին Լիպարիտեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Յարութ եւ Մայտա Եաղսզեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Մանուկ եւ Վերժին Կէտէրեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Նազարէթ Ճանսզեան | $100 |
| Heartbeat Cardiovascular Med. Group | $100 |
| Տէր եւ Տիկ. Թորգոմ Փոսթաճեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Օհաննէս Տէքիրմէնճեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Սիմոն Սիմիթեան | $100 |
| Տիկ. Սոնա Սաղրեան | $50 |
| Տէր եւ Տիկ. Ճորճ եւ Ֆլորա Տունայեանց | $50 |
| Սարգիս Վահագն | $50 |
| Տէր եւ Տիկ. Երուանդ Պապայեան | $50 |
| Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Նեկտար Տէրեան | $50 |
| Տէր եւ Տիկ. Գրիգոր Դաւիթեան | $50 |
| Վեր. եւ Տիկ. Վրթանէս եւ Անահիտ Գայայճեան | $50 |
| Տէր եւ Տիկ. Ճորճ եւ Արմենուհի Սայիպեան | $50 |
| Տէր եւ Տիկ. Էտուըրտ Շնորհոքեան | $50 |
| Տէր եւ Տիկ. Զոհրապ եւ Ռոզին Վարդանեան | $50 |
| Տէր եւ Տիկ. Յակոբ Սարաֆեան | $50 |
| Տէր եւ Տիկ. Գէորգ Թաւուքճեան | $50 |
| Հռիփսիմէ Գոզեան | $50 |
| Տիար Արա Տօսթուրեան | $50 |
| Տէր եւ Տիկ. Արթին Գալփաքեան | $40 |
| Մկրտիչ Կիրակոսեան | $25 |
| Տօքթ. Ասլան Ասլանեան | $25 |
| Տէր եւ Տիկ. Խաչիկ Թաշճեան | $25 |
| Տէր եւ Տիկ. Միսաք Գասպարեան | $15 |

## ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

*ԵՂԻՍԱԲԷԹ ՔԷՕՐՕՂԼԵԱՆի մահուան տխուր առիթով «Կիլիկեան Բարեգործական Միութեան Վարչութիւնը եւ անդամները իրենց խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնեն համայն Քէօրօղլեան ընտանիքին եւ բոլոր պարագաներուն:*

*Առ այդ $100 տոլար կը նուիրեն «Մասիս»ին:*


## ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ

**PALM SPRINGS ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԳՆԱՑՈՂ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ**

Փալմ Սփրինկսի գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրւում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թենիսի խաղադաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

*Մանրամասների համար հեռաձայնել՝*
(818) 246-0125

Վարձման գներն են՝

| | |
|---|---|
| Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝ | $ 400 |
| Long Weekend-ների համար՝ | $ 500 |
| Մէկ շաբաթուայ համար՝ | $ 675 |
| Մէկ ամսուայ համար՝ | $ 1450 |

ArmenienInfo.net
News. Informationen. Kommentare.


## «ՄԻՋՈՒԿԻ ՏՐՈՀՈՒՄԸ»

*Շարունակուած էջ 15-էն*

*ֆրանսերէնով՝ Անրի Թրուայա, Անրի Վերնէօյ, Յակոբ Խաչիկեան, Վահէ Քաչա, իտալերէնով՝ Հրանդ Նազարեան եւ Անտոնիա Արսլան ու պուլկարերէնով՝ Սեւդա Սեւան ներկայ հատորին մէջ արժանացած են գրականաքննադատական լուրջ մօտեցումի: Այս բովանդակութեամբ գիրքերուն երբեմն կու տանք նաեւ «գրական պատմութիւն» ենթախորագիրը: Մեր պարագային՝ սփիւռքահայ ժողովուրդին գրական ներաշխարհին պատմութեան վերլուծումն է, որ կ՛արձանագրէ Սուրէն Դանիէլեան, մանաւանդ երբ իբրեւ ոչ-սփիւռքահայ հեղինակ, հեռուէն կը դիտէ մեր ներքին վէճերն ու հակամարտութիւնները, բաղձանքովը՝ իրաւախոհական հաւասարակշիռ մտածողութեան մը սկզբունքին: Դժուարին առաքելութիւն մը արդարեւ:*

*Մեծ է արժանիքը սոյն երկասիրութեան: Արդար պիտի չըլլար՝ ամփոփ ակնարկով մը անդրադառնալ անոր ընդգրկած լայնահուն հարցադրումներուն եւ քննարկումներուն, ու կը սպասենք հանգամանաւոր այլ անդրադարձներուն:*

*Սփիւռքահայ ընթերցողը երախտապարտ է հեղինակին անսպառ կարելիութիւններուն, անոր յամառ եւ հետեւողական ջանքերուն, գրականագէտի եւ գեղագէտ քննադատի հմտութեան ու ճաշակին, որոնց շատ բան կը պարտի դասական ուղղագրութեամբ լոյս տեսած այս հատորը:*

## ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ՊԱՀԱՊԱՆ ՀԱՂՐԵՎԱՐԴԸ

*Շարունակուած էջ 17-էն*

*քամէք, խմէք 1 թ/գ ջրի հետ, օրը 2 անգամ, սնունդ ընդունելուց կէս ժամ առաջ:*

*- կամ՝ 100 գրամ հազրեվարդի թարմ խոտը 7 օր թրմէք 1 լ սպիտակ գինու մէջ, քամէք, խմէք մէկական ճ/գ, օրը 2-3 անգամ, սնուելուց առաջ:*

*Հիպոտոնիայի դէպքում. Լուծէք 10-20 կաթիլ հազրեվարդի ոգեթուրմը 50 մլ ջրում: Խմէք օրը 2-3 անգամ, ընդամէնը 10-15 օր: Բուժման դրական ազդեցութիւնը*

*զգալիօրէն կ՛ամրապնդեն մեղրը, մեղուահացը, ծաղկեփոշին եւ մեղուակաթը: Դեմենցիայի դէպքում. Այս հիւանդութեան դէպքում անհատը կորցնում է նախկինում կուտակուած գիտելիքը, գործնական հմտութիւնը: Լատիներէն դեմենցիա նշանակում է՝ խելագարութիւն կամ խելագրկութիւն: Մասնագէտների կարծիքով՝ այս հիւանդութեան դէպքում կարեւոր դեր է կատարում նաեւ բուսաբուժութիւնը: Շատ օգտակար է խոլորձը՝ որպէս բջիջները վերականգնող, հակաօքսիդանտ եւ հակասկլերոտիկ միջոց:*

*- Խառնէք հաւասար քանակութեամբ հազրեվարդի, պատրինջի, ոսկեհազարուկի խոտերը, հապալասի տերեւը, խնկեղէգի արմատը: Հումքի 1 ճ/գ-ն 8 ժամ թրմէք 200 մլ եռջրի մէջ, քամէք, բաժանէք 3 մասի, խմէք սնունդ ընդունելուց առաջ: Բուժումը երկարատեւ է: Պատմութիւնից յայտնի է, որ Պիւթագորասը երբեք գրի չէր առնում իր գիտելիքները, այդ իսկ պատճառով նրա ուսանողները յիշողութիւնը թարմացնելու համար իրենց մօտ հազրեվարդի ճիւղ էին պահում:*

*Արոմաթերապիա Հազրեվարդի իւղն օգտակար է մի շարք հիւանդութիւնների դէպքում, սակայն եթերային իւղերով բուժումն ունի մի շարք հակացուցումներ, այդ պատճառով անհրաժեշտ է խորհրդակցել բուժող բժշկի հետ:*

*Հեպատիտի, խոլեցիստիտի դէպքում. 2-ական կաթիլ վարդի, հազրեվարդի, եղեսպակի իւղերը խառնէք 20 մլ բուսաիւղի հետ, կատարէք մերսում լեարդի շրջանում՝ ժամացոյցի սլաքի ուղղութեամբ: Լոգանք աւելորդ քաշի դէպքում. խառնէք 1 ճ/գ ծովի աղը, 4 կաթիլ նարնջի, 4 կաթիլ կիտրոնի, 2 կաթիլ հազրեվարդի իւղեր: Այս բոլորն աւելացրէք 36-38 աստիճանի լոգանքի ջրին: Լոգանքի տեւողութիւնը՝ 5-15 րոպէ, ընդամէնը 10-15 լոգանք, որոնք կատարէք օրը մէջ՝ սնուելուց յետոյ: Այսպիսի լոգանքները կարելի է շարունակել շաբաթը 1-2 անգամ:*

*Լոյսոն՝ Նոր առաջացող կնճիռների աճը կանխելու համար: Խառնէք հաւասար քանակութեամբ երիցուկի եւ վաղենակի ծաղիկները, ղաղձի եւ հազրեվարդի տերեւը: Հումքի 60 գրամը 15 օր թրմէք 750 մլ սպիտակ գինու մէջ: Քամէք: Երեկոյեան մաքրէք դէմքը այդ ոգեթուրմով, որից յետոյ ճարպոտ մաշկի համար քսուք օգտագործէք: Թրջոց այտուցուած կոպերի դէպքում. Հազրեվարդի 1 թ/գ տերեւը մէկ ժամ թրմէք 100 մլ եռջրի մէջ, քամէք:*


**Ձեր Ծանուցումները Վստահեցէք**
**«Մասիս» Շաբաթաթերթին**
T: (626) 797-7680 F: (626) 797-6863 massis2@earthlink.net


**REQUEST FOR QUALIFICATIONS FOR A MASTER DEVELOPER FOR JORDAN DOWNS REDEVELOPMENT**
**RFQ NO. 7556**

The Housing Authority of the City of Los Angeles invites Statements of Qualifications from qualified for-profit or non-profit developers of affordable housing to act as the master developer and to partner with the Authority and City of Los Angeles for the redevelopment of the Jordan Downs public housing site in the Watts community of Los Angeles. copy of the RFQ may be obtained beginning September 7, 2011 via www.hacla.org/ps or call (213) 252-5405 or 252-1832. Submittals will be accepted until 2:00 P.M. (Pacific Time) by November 4, 2011.

9/15, 9/22/11
CNS-2169690#
MASSIS WEEKLY


ARMENIAN INDEPENDENCE DAY
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՆ
20
FESTIVAL
Փառատօն
Կազմակերպութեամբ Organized By
ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION
SUNDAY SEPTEMBER 18, 2011
VERDUGO PARK, GLENDALE
1621 Cañada Blvd. Glendale, CA 91208.
Starting at 11:00 am
Live Music
Dancing
Art Work Exibition
Kids Games
Armenian Food
ԵՐԳ ՈՒ ՊԱՐ
ԱՐՈՒԵՍՏԻ ԳՈՐԾԵՐ
ՓՈՔՐԵՐՈՒ ԽԱՂԵՐ
ՀԱՄԱԴԱՄ ՃԱՇԵՐ
FREE ADMISSION
ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ
To reserve your booth
please call Nor Serount Cultural Association
Ձեր կրպակները ապահովելու համար
Հեռաձայնեցէք Նոր Սերունդ Մշակութային Միութեան
(818) 391-7938
Sponsors
amga
ARMENIAN MEDIA GROUP OF AMERICA INC.
JAVANAN
MGN | Paradise, Inc.
WELLS FARGO
CEDARLANE
Great Tasting Natural & Organic Foods
Glendale West Pharmacy and Medical Supply
COMMERCEWEST BANK
AABC
HIGH VISION
Մասիս
www.massispost.com
MERIDIAN STUDIOS
SUPER KING MARKETS
Vrej Pastry
TAMARA
SARKIS